

*ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ
«ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ*



**ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ**

ԶԵԿՈՒՅՑ

ԳՅՈՒՄՐԻ, 2010

**ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ
2009-2010 թթ.**

ԶԵԿՈՒՅՑ

**Քաղաքական մշակույթի և համաձայնությունների
զարգացման «Շիրակ կենտրոն» ՀԿ**

Շիրակի մարզ, 3104, Գյումրի,
Վարպետաց 176, 301
Հեռ. +(374 312) 6 -69-92
+(37491) 45-13-37

E-mail: info@shirakcentre.org
Վեբ կայք. www.shirakcentre.org

Բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգ աղետի գոտում: Ջեկույց



Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման
«Շիրակ կենտրոն» ՀԿ, 2010 թ., 58 էջ

Ջեկույցն արտացոլում է «Շիրակ կենտրոնի» կողմից 2009 թ. նոյեմբերից մինչև 2010 թ. հուլիս ամիսը Գյումրիում իրականացված բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգի արդյունքները:

Ծրագիրն իրականացվել է



Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական աջակցությամբ:

Ջեկույցը պատրաստել են

*Ծրագրի ղեկավար՝ Վահան Թումասյան
Ծրագրի համակարգող՝ Աիդա Խաչատրյան
Խմբագիր՝ Գեղամ Մկրտչյան
Աշխատանքային խումբ՝
Նարեկ Թումասյան, Ջուլիետա Գրիգորյան*

© «Շիրակ կենտրոն»
Գյումրի, 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	6
3. ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ.....	8
4. ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ.....	11
5. ԲՆԱԿԱՇԽՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ.....	12
6. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	12
6.1 Վիճակահանություն 1.....	15
6.2 Վիճակահանություն 2.....	16
6.3 Վիճակահանություն 3.....	17
6.4 Վիճակահանություն 4.....	18
6.5 Վիճակահանություն 5.....	19
6.6 Վիճակահանություն 6.....	20
6.7 Ընդհանուր արդյունքներ.....	21
7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	22
7.1 Ձեռքբերումներ.....	23
7.2 Խոչընդոտները և առաջարկություններ.....	27
8. ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԳՐԱՑԻՎՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ.....	31
9. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ.....	33
9.1 Հերթացուցակ.....	33
9.2 Բնակարանների հատկացում.....	36
9.3 Վիճակահանություն.....	39
9.4 Տարածքների ազատումը ժամանակավոր կացարաններից.....	41
10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	46
10.1 ՀՀ Քաղաքաշինության նախարարության տեղեկանք-2009 թ.	46
10.2 Հատվածներ մամուլում հրապարակված նյութերից.....	47
10.3 Պաշտոնական գրություններ և պատասխաններ.....	52
11. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	56

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զեկույցն արտացոլում է աղետի գոտում 2009-2010 թթ. ՀՀ կառավարության իրականացրած բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգի արդյունքները: Մոնիտորինգն իրականացրել է «Շիրակ կենտրոն» ՀԿ-ն՝ Գյումրի քաղաքում, «Աղետի գոտու անօթևանների իրավունքների պաշտպանություն, բնակարանների բաշխման գործընթացի հանրային մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ:

Ծրագրի նպատակներն էին անօթևանների իրազեկումը բնակարանների բաշխման գործընթացի և իրենց իրավունքների մասին, նրանց շահերի և իրավունքների պաշտպանությունը, բնակբաշխման գործընթացի հանրային մոնիտորինգը և զեկույցի հրապարակումը: Նպատակ ունեինք այդ գործընթացում հասարակական մասնակցություն ապահովելով՝ այն դարձնել թափանցիկ, կանխել կոռուպցիոն դրսևորումներն ու օրինախախտումները, մոնիտորինգի միջոցով պարզել օրենսդրական պահանջներին գործընթացի համապատասխանության աստիճանը և ստանալ հավաստի ու հիմնավորված տվյալներ առկա բացերի, շահերի բախման ու գործընթացի օրինական ընթացքը խոչընդոտող այլ անկատարությունների վերաբերյալ: Նաև կարևորում էինք ինչպես դրական, այնպես էլ բացասական դրսևորումների, դրանց օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների մասին տեղեկատվության տրամադրումը հասարակությանն ու իշխանություններին, բնակբաշխման գործընթացի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների, չօգտագործված ռեսուրսների, առկա խնդիրները լուծելու կամ մեղմելու այլընտրանքային ճանապարհների մասին եզրակացությունների, ուղերձների պատրաստումը և հանրայնացումը: Մենք խնդիր էինք դրել վերոհիշյալ գործողություններով նպաստել.

- բնակարանների բաշխման գործընթացի և համապատասխան օրենսդրության կատարելագործմանը,
- անօթևանների և իշխանությունների միջև անվստահության մթնոլորտի ու հակասությունների նվազեցմանը:

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվեցին ՀՀ քաղաքաշինության նախարարության հրամանագրերով 2009-2010 թթ. բնակարաններ ստացած 1056 ընտանիքների և Գյումրու անօթևանների հերթացուցակում ընդգրկված հարյուրավոր քաղաքացիների գործեր: Պատրաստվեցին բազմաթիվ դիտողություններ, կատարվեցին տասնյակ հարցումներ իշխանության տարբեր մարմիններից, հրապարակվեցին բաց նամակներ, դիմում-առաջարկներ, այդ թվում՝ ՀՀ կառավարության սահմանած՝ աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգում փոփոխություններ կատարելու մասին: Բոլոր դիտարկումները և փաստաթղթերը հրապարակվեցին բազմաթիվ ՁԼՄ-ներում, ինչպես նաև տեղադրվեցին www.shirakcentre.org վեբ կայքում:

Ծրագրի ընթացքում մեր կողմից պատրաստված բոլոր փաստաթղթերն այս զեկույցում ընդգրկելը ծավալային առումով պարզապես անհնար էր, ուստի ընտրեցինք դրանցից ամենակարևորները:

Ծրագրի նախնական փուլում թեև չէինք ներառել աղետի գոտում բնակբաշխման գործընթացի հնարավոր կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության իրականացում, սակայն գործնական մոնիտորինգի ընթացքում մեր ձեռքի տակ

կուտակվեցին զգալի քանակի նյութեր, որոնց հիման վրա նպատակահարմար համարեցինք պատրաստել «Կոռուպցիոն ռիսկերը աղետի գոտու բնակարանների բաշխման գործընթացում» հրապարակումների շարքը: Հոդվածաշարը հաջորդաբար հրապարակվեց բազմաթիվ լրատվական կայքերում և մամուլում, ինչպես նաև որոշեցինք այն ամբողջությամբ ընդգրկել ընդհանուր զեկույցում:

Մոնիտորինգն իրականացնելիս թեև լուրջ խոչընդոտների չհանդիպեցինք, սակայն ակնհայտ էր մի բան. Հայաստանում՝ հասարակական մասնակցության ավանդույթի բացակայության պայմաններում, հանրային նշանակության աշխատանքներին քաղաքացիական կառույցների մասնակցությունն իշխանությունները սովորաբար ընկալում են իբրև իրենց վերահսկելու փորձ և ոչ ամենևին որպես աջակցություն:

Մի դիտարկում ևս: Բնակբաշխման գործընթացի օրինական ճանապարհով ընթանալուն ուղղված յուրաքանչյուր քայլից հետո ակամա մեզ մեղավոր էինք զգում, որ նախկինում չենք փորձել մասնակցություն ունենալ և նպաստել, որպեսզի անցած տարիներին իրականացված բնակբաշխումներում տեղ չգտնեին այնպիսի աղաղակող օրինախախտումներ, որոնց մասին մինչև օրս Գյումրիում խոսում են: Ի դեպ, եթե բնակարանները նախկինում հատկացվեին արդարացի, ներկայումս անհամեմատ պակաս թվով անօթևաններ կունենայինք: Էլ չենք խոսում անօթևաններին բնակբաշխման յուրաքանչյուր փուլում հասցված հոգեբանական հարվածի ու հիասթափության մասին:

«Շիրակ կենտրոն» ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցեցին ծրագրի հաջող իրականացմանը:

2. ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մոնիտորինգի մեթոդաբանությունը մշակելիս ծրագրի աշխատակազմն իր ձեռքի տակ ուներ հայաստանյան տասնյակ հասարակական կազմակերպությունների կողմից տարբեր ոլորտներում իրականացված մոնիտորինգների զեկույցներ: Կային նաև մի շարք միջազգային կազմակերպությունների հեղինակած մոնիտորինգի ուսուցողական ձեռնարկներ: Սակայն ինչպես նկատեցինք՝ հայաստանյան կազմակերպությունները հիմնականում գերադասել էին մարդու իրավունքներից ուսումնասիրել քաղաքական ազատությունների ոլորտը, միջազգային փորձից ևս մեզ շատ բան չհաջողվեց ընտրել: Դա թերևս սպասելի էր, քանզի մեր ընտրած ոլորտն իր տեսակով առանձնահատուկ էր՝ աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթաց, ինչը բարեբախտաբար ոչ բոլոր մարզերում և երկրներում է առկա: Թեև կարծում ենք՝ արժե նշել, որ հայաստանյան ՀԿ-ները պետք է կարևորեն մոնիտորինգների իրականացումը նաև տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների ոլորտներում:

Ինչևիցե, մենք պարտադրված էինք ինքնուրույն մշակել ողջ մեթոդաբանությունը: Մեր նպատակն էր իրականացնել հնարավորինս մասնագիտական և մանրամասն դիտարկում, որը թույլ կտար նաև օրենսդրական փոփոխություններին նպատակաուղղված առաջարկությունների փաթեթ պատրաստել: Մեզ դա հաջողվեց մի շատ պարզ պատճառով. թեման մեզ՝ աղետի

գոտու բնակիչներին հուզող և ծանոթ էր, կար նախկինում կուտակած փորձ և նախապատրաստված հարուստ տեղեկատվական բազա:

Ինչպես մոնիտորինգի մեթոդաբանությունը մշակելիս, այնպես էլ այն իրականացնելիս մենք նախընտրեցինք և առավելապես ուշադրության կենտրոնում պահեցինք կանխարգելիչ գործառնությունը՝ մեր խնդիրն ամեննին չհամարելով միայն փաստերի հավաքումը, խախտումների ապացույցներ և փաստարկներ ձեռք բերելը:

Ի սկզբանե որդեգրելով ճկուն գործելաոճ, ծրագրի ընթացքում երբեմն փոփոխության ենթարկեցինք նրա ռազմավարությունը և կողմնորոշիչները:

Ծրագրի կարևորագույն նպատակներից էր բնակարանների բաշխման գործընթացում նախ և առաջ օրինախախտումների ու կոռուպցիայի կանխարգելումը: Կարծում ենք՝ մեզ դա ինչ-որ չափով հաջողվեց: Հաջողության գրավականներից մեկն էլ առավելագույն հրապարակայնության ապահովումն էր և գործնական հարաբերությունների հաստատումը բնակարանների բաշխման գործընթացում ներգրավված իշխանական մարմինների, ՁԼՄ-ների, ՔՀԿ-ների հետ:

Հատուկ ուզում ենք նշել, որ մեր ծրագրի արդյունավետությանը զգալի նպաստ բերեցին ԲՀԻՕՀ-ի կողմից 2009 թ. աշնանը Աղվերանում բյուջեի մոնիտորինգի դասընթացից ձեռք բերած գիտելիքներն ու նյութերը:

Մոնիտորինգն իրականացնելիս մեր ձեռքին ունեինք.

1. Գյումրու անօթևանների հերթացուցակը
2. Շիրակի մարզի անօթևանների հերթացուցակը
3. Գյումրիում մինչև օրս բնակարան ստացած անձանց ցուցակը
4. Գյումրիում երկրաշարժից փլված շենքերի ցուցակը
5. ՀՀ Կառավարության և քաղաքաշինության նախարարի համապատասխան հրամաններն ու որոշումները
6. Գյումրու քաղաքապետի միջնորդագրերը
7. բնակարանների բաշխման հանձնաժողովի նիստերից սղագրություններ
8. աղետի գոտում անհատական բազմաբնակարան տների և շենքերի շինարարություն կատարելու նպատակով անհատական վարկային միջոցներից օգտված Շիրակի մարզի վարկառուների ցուցակը
9. աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացին վերաբերող այլ փաստաթղթեր և ՁԼՄ-ների հրապարակումներ:

Բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգի իրականացման համար մեր կողմից կիրառվեցին հետևյալ հիմնական մեթոդները.

- բնակբաշխման գործընթացի դիտարկում
- փաստաթղթերի ուսումնասիրություն
- օրենսդրության վերլուծություն:

Ընդգրկված լինելով ՀՀ քաղաքաշինության նախարարության աղետի գոտու բնակարանների բաշխման հանձնաժողովում, ըստ էության իրականացրինք բնակարան ստացող քաղաքացիների փաստաթղթերի կրկնակի ուսումնասիրություն՝ բնակբաշխման հանձնաժողովում և ապա մոնիտորինգի շրջանակներում: ՀՀ քաղաքաշինության նախարարությունից պարբերաբար ստանալով բնակարանների հատկացման որոշումներն ու բնակբաշխման վիճակահանության մասնակիցների ցուցակները, ստուգում էինք.

- թե արդյո՞ք տվյալ ընտանիքն ընդգրկված է Գյումրու անօթևանների հերթացուցակում,
- արդյո՞ք տվյալ ընտանիքը նախկինում ևս բնակարան չի ստացել,

- արդյո՞ք տվյալ ընտանիքին նախկինում պատկանած բնակարանը երկրաշարժին փլվել է, և այլն:

Այնուհետև առանձնացնում էինք այն անօթևանների անուններն ու գործերը, որոնց հետ կապված խնդիրներ էին ծագում: Պատրաստում էինք համապատասխան գրություններ, որոնցով հավելյալ տեղեկատվություն և պարզաբանումներ էինք պահանջում ՀՀ քաղաքաշինության նախարարությունից ու Գյումրու քաղաքապետարանից, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կատարում էինք այցելություններ անօթևանների ժամանակավոր կացարաններ: Ուսումնասիրությունների արդյունքներով ստացված թվային տվյալները մուտքագրում էինք հատուկ այդ նպատակով պատրաստված աղյուսակների մեջ, որոնք նույնպես տեղ են գտել այս զեկույցում:

Մենք ծրագրի ընթացքում մեր հնարավորությունների սահմաններում իրականացրինք նաև բնակբաշխման հանձնաժողովի պարտականությունների մեջ մտնող մի շարք կազմակերպական բնույթի գործողություններ՝ բնակարանների հավաստագրերի բաժանում, վիճակահանություններին մասնակցելու, բնակարանների բանալիների ստացման հրավերների ուղարկում և այլն, ապացուցելով, որ մեր նպատակը միայն բնակբաշխման գործընթացի դիտարկումը չէր:

3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948) հոդված 25-ի համաձայն «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք»:

Եվրոպական սոցիալական խարտիայի (1996) հոդված 31-ի համաձայն բնակարանի իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ ուղղված պատշաճ չափանիշներով բնակարանների մատչելիության խթանմանը, անօթևանության կանխմանն ու կրճատմանը՝ այն աստիճանաբար վերացնելու նկատառումով, բնակարանի գինը բավարար միջոցներ չունեցողների համար մատչելի դարձնելուն:

ՀՀ Սահմանադրության հոդված 34-ի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»:

Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը սահմանված է ՀՀ Կառավարության 1999 թ. N 432 որոշմամբ, որի համաձայն՝

13. Պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանները բաշխում և «հատկացնում է Հայաստանի Հանրապետության

քաղաքաշինության նախարարը» համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված հերթացուցակների համաձայն՝ դրանցում ընդգրկված քաղաքացիների հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության արդյունքներով:

15. Բնակարանների բաշխման հրապարակայնությունն ապահովելու նպատակով քաղաքացիներին բնակարան հատկացնելու մասին որոշումները հրապարակվում են տեղական մամուլում:

16. Բնակելի տարածությունները քաղաքացիներին հատկացվում են սույն կետով սահմանված նորմաների սահմաններում, սակայն վարձակալի և նրա ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցված բնակարանի սենյակների թվից ոչ ավելի:

Բնակելի տարածությունը հատկացվում է՝

1-սենյականոց բնակարանը՝ միննույն սեռի կամ տարբեր սեռի երկու մարդուց բաղկացած ընտանիքին, եթե երեխան ինը տարեկանից փոքր է, ինչպես նաև ամուսիններին.

2-սենյականոց բնակարանը՝ ինը տարեկանից մեծ տարբեր սեռի երկու մարդուց (բացի ամուսիններից) և երեք մարդուց բաղկացած ընտանիքին.

3-սենյականոց բնակարանը՝ չորս-հինգ մարդուց բաղկացած ընտանիքին.

4-սենյականոց բնակարանը՝ վեց-յոթ մարդուց բաղկացած ընտանիքին:

4 և 5-սենյականոց բնակարան կորցրած քաղաքացիներին, որոնց ընտանիքները բնակարանի հատկացման պահին բաղկացած են ութ և ավելի մարդուց, կարող է հատկացվել 2 բնակարան: Ընտանիքներին մեկից ավելի բնակարան հատկացվելու դեպքում դրանք, հնարավորության դեպքում, տրվում են նույն մուտքում և նույն հարկում:

18. Աղետի գոտու բնակավայրերում արտահերթ բնակելի տարածությունները հատկացվում են հետևյալ հերթականությամբ՝

ա) երկրաշարժի հետևանքով 1-ին խմբի հաշմանդամ դարձած անձանց.

բ) երկրորդ համաշխարհային պատերազմի 1-ին խմբի հաշմանդամներին և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց.

գ) մանկությունից հաշմանդամ ունեցող ընտանիքներին.

դ) զինծառայողներից 1-ին խմբի հաշմանդամներին.

ե) աշխատանքի 1-ին խմբի հաշմանդամներին.

զ) երկրաշարժի հետևանքով լրիվ որբացած անչափահասներին.

է) կերակրողներից մեկին կորցրած՝ անչափահաս երեխա ունեցող, ինչպես նաև երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին.

ը) միայնակ ծերերին.

թ) միայնակ մայրերին.

ժ) որբ երեխա որդեգրած անձանց.

ժա) երկրաշարժի հետևանքով 2-րդ խմբի հաշմանդամ դարձած անձանց.

ժբ) երկրորդ համաշխարհային պատերազմի 2-րդ խմբի հաշմանդամներին և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց.

ժգ) աշխատանքի 2-րդ խմբի հաշմանդամներին.

ժդ) զինծառայողներից 2-րդ խմբի հաշմանդամներին.

ժե) երկրաշարժի հետևանքով զոհ ունեցող ընտանիքներին.

ժգ) որոշ ծանր քրոնիկ այն հիվանդություններով տառապող անձանց, որոնք թվարկված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված հիվանդությունների ցանկում.

ժէ) «Հերոսուհի մայր» կոչմանն արժանացած մայրերին.

ժը) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված ռազմիկների ընտանիքներին.

ժթ) երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված կամ անհայտ կորած ռազմիկների (պարտիզանների) և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց ընտանիքներին.

ի) երկրորդ համաշխարհային պատերազմի 3-րդ խմբի հաշմանդամներին և սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց.

իա) պետական կամ հասարակական պարտականությունները կատարելիս կամ արտադրության մեջ դժբախտ պատահարի հետևանքով զոհված անձանց ընտանիքներին.

իբ) սահմանված կարգով հաստատված ցուցակի համաձայն աշխատանքի վնասակար պայմաններով աշխատանքում 10 և ավելի տարի բարեխղճորեն աշխատած բանվորներին ու ծառայողներին.

իգ) ԽՍՀՄ և Հայաստանի ազգային հերոսներին.

իդ) փառքի, աշխատանքային փառքի, «ԽՍՀՄ զինված ուժերում հայրենիքին ծառայելու համար» բոլոր երեք աստիճանի շքանշաններով պարգևատրված անձանց.

իե) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ խեղման կամ հիվանդության հետևանքով հաշմանդամ ճանաչված ռազմիկներին.

իզ) քաղաքացիական և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ու այլ մարտական գործողությունների ժամանակ գործող բանակի կազմում գտնված անձանց, քաղաքացիական ու երկրորդ համաշխարհային պատերազմների պարտիզաններին, ինչպես նաև մարտական գործողություններին մասնակցած մյուս անձանց.

իէ) այն քաղաքացիներին, որոնց նախկինում նշանակվել են միութենական և հանրապետական նշանակության անհատական կենսաթոշակներ.

իը) ընտանիքներին՝ երկվորյակներ ծնվելու դեպքում.

իթ) արտադրության ոլորտում 15 և ավելի տարի աշխատած բանվորներին ու ծառայողներին.

լ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Այն ընտանիքներին, որոնց վրա տարածվում են սույն կետի «ժը», «ժթ» և «իա» ենթակետերի գործողությունները, անդամների թվին են դասվում զոհվածի կամ անհայտ կորածի խնամքի տակ գտնվող անձինք, որոնց այդ կապակցությամբ կենսաթոշակ է վճարվում, ծնողները, ամուսինը, որը նորից չի ամուսնացել՝ անկախ նրա կենսաթոշակ ստանալուց, զավակները, որոնք իրենց ընտանիքները չունեն կամ թեև ունեն իրենց ընտանիքները, բայց հաշմանդամ են դարձել մինչև չափահաս դառնալը, ինչպես նաև իրենց ընտանիքներն ունեցող զավակները, որոնց երկու ծնողները զոհվել են կամ անհայտ կորել, կամ ունեցել են մեկ ծնող, որը զոհվել է կամ անհայտ կորել:

21. Կառուցված բնակելի տների բնակարանները քաղաքացիներին հատկացվում են դրանց շինարարության ավարտի փաստագրումից անմիջապես հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական աջակցություն ցուցաբերելու մասին համապատասխան պայմանագրի հիման վրա:

22. Սույն կարգի համաձայն բնակարանները հատկացվում են այն քաղաքացիներին, որոնք արտահերթ բնակարան ստանալու իրավունք ունեցել են մինչև 1999 թվականի հունվարի 1-ը:

4. ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի հետևանքով Շիրակի մարզի համայնքներում վնասվեց 3,677 մլն քառ. մ ընդհանուր մակերեսով բնակտարածություն: Գյումրիում փլվեց շուրջ 22 հազ. բնակարան: Անցած տարիների ընթացքում Գյումրիում կառուցվել է մոտ 18.000 բնակարան: Մակայն 2009 թ. տվյալներով դեռևս 4200 ընտանիքներ հաշվառված են Գյումրու անօթևանների հերթացուցակում, որից 1056-ը բնակարան ստացան ընթացիկ տարում:

Խորհրդային իշխանությունների կողմից 1988-ի երկրաշարժից անմիջապես հետո ընդունվեց մի որոշում, որով նախատեսվում էր 1989-1990 թթ. ամբողջովին վերականգնել աղետի գոտին: Չնայած մեծ ծավալի աշխատանքներին և համաշխարհային հանրության աջակցությանը, աղետի գոտու վերականգման այդ ծրագիրը չիրականացավ:

ՀՀ կառավարությունը 1994 թ. հոկտեմբերի 7-ին, N 17 որոշմամբ ընդունեց աղետի գոտու վերականգնման նոր ծրագիր, ըստ որի աղետի գոտու բնակավայրերը պետք է վերականգնվեին մինչև 2001 թվականը՝ մինչև երկրաշարժն ունեցած ծավալներով:

1998 թ.-ին էլ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հաստատեց աղետի գոտու վերականգման նոր ժամկետ՝ 1998-2001 թթ., որից ելնելով վերանայվեցին ելակետային տվյալները և ձևավորվեցին պետական պարտավորություններ երկրաշարժից տուժած անօթևան բնակիչների նկատմամբ: Երկու անգամ պակասեցնելով Շիրակի մարզի բնակավայրերի վերականգման աշխատանքների ծավալները, կազմվեց նոր ծրագիր: Այն հաստատվեց ՀՀ կառավարության 1998 թ. նոյեմբերի 11-ին N 701 որոշմամբ, ըստ որի վերականգնումը պետք է իրականացվեր ամբողջովին 1998-2001 թվականներին:

Երկրաշարժի պատճառով Շիրակի մարզի բնակավայրերում վնասված 3,677 մլն քառ. մ ընդհանուր մակերեսով բնակտարածությունից մինչև 1998 թվականը վերականգնվել էր 1,525 մլն քառ. մ բնակֆոնդ: 1998-2001 թթ. մարզում ծրագրվեց վերականգնել ընդամենը 1,071 մլն քառ. մ բնակտարածություն, որը նախորդ ծրագրից պակաս էր 1,081 մլն քառ. մ-ով:

2001 թ.-ին ՀՀ իշխանությունները աղետի գոտու վերականգման ևս մեկ՝ երրորդ ժամկետն էլ հայտարարեցին՝ 2001-2003 թթ.:

Վերոհիշյալ ծրագրերը կամ չիրականացվեցին կամ կատարվեցին մասնակի:

2008 թ.-ին ՀՀ կառավարությունը, «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի» համաձայն, աղետի գոտու անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման վերջնաժամկետ հայտարարեց 2013 թվականը:

2008 թ.-ին ՀՀ կառավարության և «Գլենդել Հիլզ» կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն ՀՀ պետական բյուջեի միջոցներով միայն

Գյումրիում մինչև 2013 թ. կառուցվելու են 3030 բնակարան և սպասարկման օբյեկտների տարածքներ:

5. ԲՆԱԿԲԱՇԽՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Գյումրիում մինչև 2003 թվականը բնակարանները բաշխվել են քաղաքապետարանի, 2003-2008 թթ.՝ Շիրակի մարզպետարանի կողմից: Իսկ 2008 թվականից, ՀՀ կառավարության 1999թ. N 432 որոշմամբ սահմանված «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգի» մեջ կատարված փոփոխություններից հետո, բնակարանների բաշխումն իրականացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարը՝ իր հրամանով ստեղծված հանձնաժողովի միջոցով: Ավելացնենք, որ խորհրդային տարիների մայրամուտին աղետի գոտում բնակարանաշինություն իրականացնող շինկազմակերպությունները ևս բնակարանների իրենց մասնաբաժինն ունեին՝ 10-20 տոկոս: Իրենց կողմից կառուցված բնակարանների մի մասը իրենք էին բաժանում՝ հիմնականում տվյալ շինարարական կազմակերպություններում աշխատողներին:

2009-2010 թթ. բնակբաշխման գործընթացն իրականացվեց հետևյալ կերպ. ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակարանների բաշխման հանձնաժողովի համապատասխան հայտարարությանն արձագանքելով՝ անօթևանները պահանջվող փաստաթղթերը ներկայացնում էին հանձնաժողովի աշխատանքներին աջակցող աշխատանքային խմբին, որը նրանց համեմատաբար ամբողջական գործերն ըստ հերթականության ներկայացնում էր բնակարանների բաշխման հանձնաժողովին: Հանձնաժողովը, որը ղեկավարում էր ՀՀ քաղաքաշինության նախարարը, պարբերաբար ուսումնասիրում էր բնակարաններ ստանալու հավակնորդ ընտանիքների փաստաթղթերը, կայացնում էր համապատասխան որոշում և փուլ առ փուլ ներկայացնում էր ՀՀ քաղաքաշինության նախարարին՝ հրամանագրման: Այնուհետև նորակառույց բնակարանները հրապարակային վիճակահանությամբ բաշխվում էին հրամանագրերում ընդգրկված քաղաքացիներին:

6. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գյումրիում ՀՀ կառավարության 2009-2010 թթ. բնակարանային շինարարության ծրագրով կառուցվեց և բաշխվեց 1056 բնակարան, որոնցից մեկսենյականոց՝ 440, երկսենյականոց՝ 352, երեքսենյականոց՝ 264 բնակարան:

Նախ ասենք, որ ծրագրի սկզբում նախատեսել էինք 2009-2010 թթ. աղետի գոտում բաշխվող բնակարաններից վիճակահանությամբ ընտրել և դիտարկել միայն 300-500 գործեր, սակայն ընթացքում մենք փոխեցինք մեր մոտեցումը և մոնիտորինգի ենթարկեցինք այդ փուլում բնակարան ստացող բոլոր՝ 1056 ընտանիքների գործերը:

Ուսումնասիրեցինք ինչպես ՀՀ քաղաքաշինության նախարարի համապատասխան հրամաններով բնակարան ստացած անձանց ցուցակներում ընդգրկված, այնպես էլ բնակարանների բաշխման վիճակահանությանը մասնակցած անձանց գործերը: Սակայն որպես հիմք ընդունեցինք բնակարանների բաշխման վիճակահանության մասնակիցների ցուցակները, քանզի հնարավոր էր, որ հրամանագրերում ընդգրկված քաղաքացիներին թույլ չտրվեր մասնակցել

վիճակահանությանը՝ այն պատճառով, որ այդ անձանց վերաբերյալ բնակարան ստանալուն խանգարող նոր փաստեր հայտնաբերված լինեին մինչև վիճակահանությունը:

Բնակարան ստացած բոլոր անձանց գործերն ուսումնասիրելու մեր որոշումն արդարացված էր: Եվ ամենից առաջ՝ այն պատճառով, որ մեզ մեծ ցանկության դեպքում իսկ որևէ մեկը չէր կարողանա մեղադրել կողմնապահության կամ դիտավորյալ այս կամ այն խումբ քաղաքացիների գործերի ընտրության, որոշակի շահերից թելադրված ուսումնասիրություն իրականացնելու մեջ:

Ուսումնասիրությունների արդյունքներով մենք բնակարանների վիճակահանությանը մասնակցած 1056 ընտանիքների գործերից առանձնացրինք և հաջորդաբար ՀՀ քաղաքաշինության նախարարությունից լրացուցիչ տեղեկություններ պահանջեցինք 54 ընտանիքների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ պատասխան ստացանք հարցված բոլոր անձանց վերաբերյալ: Ի դեպ, բնակարանի հավակնորդ անձանց գործերը ստուգելիս մենք հիմք էինք ընդունում ոչ թե նրանց անուն - ազգանունները, այլ երկրաշարժից փլված բնակարանների հասցեները, քանզի հնարավոր է, որ նախկինում բնակարան ստացած լինեին ընտանիքի մեկ այլ անդամի անունով:

Այդ հսկա ծավալի աշխատանքը հնարավոր դարձավ իրականացնել նաև այն պատճառով, որ տարբեր իշխանական մարմիններից կարողացանք հայթայթել մոնիտորինգի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

2009 թ. դեկտեմբերից մինչև 2010 թ. հունիս ամիսը ներառյալ Գյումրու դրամատիկական թատրոնի դահլիճում կայացավ բնակարանների բաշխման վեց վիճակահանություն:

Գյումրու քաղաքապետարանի կողմից մեզ տրված պարզաբանման համաձայն երկրաշարժից առաջ հանրակացարաններում և ֆոնդի տներում թեև բնակվել են բազմաթիվ ընտանիքներ, սակայն ունեցել են նույն հասցեն: Ինչպես նաև նույն հասցեն են ունեցել պետական և կոոպերատիվ հիմունքներով կառուցված տարբեր շենքեր:

Ստորև ներկայացնում ենք մոնիտորինգի արդյունքների թվային տվյալները և դրանց աղյուսակներն ըստ բնակբաշխման վիճակահանությունների հերթականության:

Գյումրիում 2009-2010 թթ. բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում Մուշ-2 թաղամասում, ինչպես վերը նշեցինք, կառուցվեց 1056 բնակարան: Բնակարանները 2009 թ. դեկտեմբերից մինչև 2010 թ. հուլիս ամիսը վիճակահանություններ կազմակերպելու ճանապարհով բաշխվեցին բնակարանների հատկացման մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանագրերում ընդգրկված անօթևաններին:

Բնակարանների բաշխման վիճակահանություն N 1 - 19.12.2009 թ.
բաշխվեց 92 բնակարան՝ 1 սենյականոց – 38, 2 սենյականոց – 30, 3 սենյականոց – 24:

Բնակարանների բաշխման վիճակահանություն N 2 - 12.02.2010 թ.
բաշխվեց 193 բնակարան՝ 1 սենյականոց – 81, 2 սենյականոց – 64, 3 սենյականոց – 48:

Բնակարանների բաշխման վիճակահանություն N 3 - 16.04.2010 թ.

բաշխվեց 193 բնակարան՝ 1 սենյականոց – 81, 2 սենյականոց – 64, 3 սենյականոց – 48:

Բնակարանների բաշխման վիճակահանություն N 4- 14.05.2010 թ.

բաշխվեց 145 բնակարան՝ 1 սենյականոց – 81, 2 սենյականոց – 64, 3 սենյականոց – 0:

Բնակարանների բաշխման վիճակահանություն N 5 - 26.05.2010 թ.

բաշխվեց 143 բնակարան՝ 1 սենյականոց – 40, 2 սենյականոց – 31, 3 սենյականոց – 72:

Բնակարանների բաշխման վիճակահանություն N 6- 18.06.2010 թ.

բաշխվեց 290 բնակարան՝ 1 սենյականոց – 122, 2 սենյականոց – 96, 3 սենյականոց – 72:

Բնակարանների բաշխման ընդհանուր վիճակահանությունների արդյունքներով -

բաշխվեց 1056 բնակարան՝ 1 սենյականոց – 440, 2 սենյականոց – 352, 3 սենյականոց – 264:

Նշենք, որ թեև Գյումրու Մուշ-2 թաղամասում բնակարանների վերջնական շահագործման պահին ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանագրերով և վիճակահանությունների արդյունքներով հատկացվեցին 1056 բնակարաններ, սակայն մեր ուսումնասիրություններով հուլիս ամսվա դրությամբ առկա էին տասնյակ ազատ բնակարաններ: Ազատ բնակարանների առկայության պատճառը 4 ընտանիքների ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից բնակարաններ հատկացնելու մասին որոշումների չեղյալ հայտարարումն էր, ինչպես նաև շուրջ 20 քաղաքացիների կողմից իրենց հատկացված բնակարաններից հրաժարվելը: Քաղաքացիները բնակարաններից հրաժարվում էին տարբեր պատճառներով, մասնավորապես մի քանի դեպքում պատճառն այն էր, որ բնակարանների վիճակահանությունների արդյունքներով իրենց բաժին էր հասել 4-րդ հարկի բնակարան: Կային նաև դեպքեր, երբ ընտանիքները հրաժարվեցին, քանի որ իրենց հատկացվեց երկրաշարժին կորցրածից պակաս թվով սենյակներով բնակարան: Իսկ երկու դեպքում հրամանագրերում ընդգրկված մեկ սենյակի հավակնորդ միայնակ թոշակառու շահառուները մահացել էին, և նրանց բնակարան հատկացնելու որոշումները չեղյալ էին հայտարարվել:

6.1 Բնակարանների բաշխման վիճակահանություն N 1
 վիճակահանության անցկացման ամիսը, օրը և տարին - 19.12.2009 թ.

1.	Բաշխված բնակարանների քանակը						92
2.	Բաշխված բնակարաններն ըստ սենյակների քանակի						
ա.	1 սենյակ		2 սենյակ		3 սենյակ		
	38		30		24		
3.	Բնակարան ստացած անձանց անունների առկայությունը անօթևանների ցուցակում						88
ա.	Ընտանիքի այլ անդամների անունների առկայությունն անօթևանների ցուցակում						4
Բ.	Բնակարան ստացած անձանց անունների բացակայությունն անօթևանների ցուցակում						0
4.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ անձերի քանակի						
ա.	1-3 անձ	3-5 անձ	5-7 անձ	7-9 անձ	9-11 անձ	11-13 անձ	13 և ավելի
	30	16	25	10	7	3	1
5.	Բնակարան ստանալու իրավունքից զրկված անձանց քանակը հերթացուցակի համեմատությամբ						64
6.	Նախկինում ևս բնակարան ստացած ընտանիքների քանակը						11
ա.	Մասնակի փոխհատուցված ընտանիքներ						4
Բ.	Նախկինում ստացած բնակարանից հրաժարված կամ զրկված ընտանիքներ						3
գ.	Հասցեների կրկնություն						2
7.	Բնակարանների հատկացումը չեղյալ հայտարարված դեպքեր						2
8.	Չպարզաբանված դեպքեր						0
9.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ արտոնությունների կետերի						
ա.	2-4	4-5	5-7	7-9	9-11	11-13	13 և ավելի
	12	0	4	75	0	0	1
10.	Բնակարան ստացած ընտանիքի ժամանակավոր բնակության վայրի տեսակը						
ա.	Տնակ		Հանրակացարան և ֆունդի տուն		Քարաշեն տուն		
	64		8		20		

6.2 Բնակարանների բաշխման վիճակահանություն N 2
 վիճակահանության անցկացման ամիսը, օրը և տարին - 12.02.2010 թ.

1.	Բաշխված բնակարանների քանակը						193
2.	Բաշխված բնակարաններն ըստ սենյակների քանակի						
ա.	1 սենյակ	2 սենյակ		3 սենյակ			
	81	64	48				
3.	Բնակարան ստացած անձանց անունների առկայությունը անօթևանների ցուցակում						180
ա.	Ընտանիքի այլ անդամների անունների առկայությունն անօթևանների ցուցակում						13
բ.	Բնակարան ստացած անձանց անունների բացակայությունն անօթևանների ցուցակում						0
4.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ անձերի քանակի						
ա.	1-3 անձ	3-5 անձ	5-7 անձ	7-9 անձ	9-11 անձ	11-13 անձ	13 և ավելի
	71	33	49	23	10	5	2
5.	Բնակարան ստանալու իրավունքից զրկված ընտանիքի անդամների քանակը հերթացուցակի համեմատությամբ						117
6.	Նախկինում ևս բնակարան ստացած ընտանիքների քանակը						14
ա.	Մասնակի փոխհատուցված ընտանիքներ						9
բ.	Նախկինում ստացած բնակարանից հրաժարված կամ զրկված ընտանիքներ						1
գ.	Հասցեների կրկնություն						2
7.	Բնակարանների հատկացումը չեղյալ հայտարարված դեպքեր						2
8.	Չպարզաբանված դեպքեր						0
9.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ արտոնությունների կետերի						
ա.	2-4	4-5	5-7	7-9	9-11	11-13	13 և ավելի
	3	0	4	148	24	11	3
10.	Բնակարան ստացած ընտանիքի ժամանակավոր բնակության վայրի տեսակը						
ա.	Տնակ		Հանրակացարան և ֆոնդի տուն		Քարաշեն տուն		
	138		11		44		

6.3 Բնակարանների բաշխման վիճակահանություն N 3
 վիճակահանության անցկացման ամիսը, օրը և տարին - 16.04. 2010 թ.

1.	Բաշխված բնակարանների քանակը						193
2.	Բաշխված բնակարաններն ըստ սենյակների քանակի						
ա.	1 սենյակ		2 սենյակ		3 սենյակ		
	81		64		48		
3.	Բնակարան ստացած անձանց անունների առկայությունն անօթևանների ցուցակում						190
ա.	Ընտանիքի այլ անդամների անունների առկայությունն անօթևանների ցուցակում						3
բ.	Բնակարան ստացած անձանց անունների բացակայությունն անօթևանների ցուցակում						0
4.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ անձերի քանակի						
ա.	1-3 անձ	3-5անձ	5-7 անձ	7-9 անձ	9-11անձ	11-13անձ	13 և ավելի
	78	48	36	19	8	3	1
5.	Բնակարան ստանալու իրավունքից զրկված ընտանիքի անդամների քանակը հերթացուցակի համեմատությամբ						79
6.	Նախկինում ևս բնակարան ստացած ընտանիքների քանակը						17
ա.	Մասնակի փոխհատուցված ընտանիքներ						8
բ.	Նախկինում ստացած բնակարանից հրաժարված ընտանիքներ						0
գ.	Հասցեների կրկնություն						4
7.	Բնակարանների հատկացումը չեղյալ հայտարարված դեպքեր						1
8.	Չպարզաբանված դեպքեր						4
9.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ արտոնությունների կետերի						
ա.	2-4	4-5	5-7	7-9	9-11	11-13	13 և ավելի
	1	0	4	71	27	7	83
10.	Բնակարան ստացած ընտանիքի ժամանակավոր բնակության վայրի տեսակը						
ա.	Տնակ		Հանրակացարան և ֆոնդի տուն		Քարաշեն տուն		
	146		7		40		

6. 4 Բնակարանների բաշխման վիճակահանություն N 4
 վիճակահանության անցկացման ամիսը, օրը և տարին - 14.05.2010 թ.

1.	Բաշխված բնակարանների քանակը						145
2.	Բաշխված բնակարաններն ըստ սենյակների քանակի						
ա.	1 սենյակ		2 սենյակ		3 սենյակ		
	81		64		0		
3.	Բնակարան ստացած անձանց անունների առկայությունն անօթևանների ցուցակում						135
ա.	Ընտանիքի այլ անդամների անունների առկայությունն անօթևանների ցուցակում						10
բ.	Բնակարան ստացած անձանց անունների բացակայությունն անօթևանների ցուցակում						0
4.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ անձերի քանակի						
ա.	1-3 անձ	3-5անձ	5-7 անձ	7-9 անձ	9-11 անձ	11-13 անձ	13 և ավելի
	64	52	16	7	5	1	0
5.	Բնակարան ստանալու իրավունքից զրկված ընտանիքի անդամների քանակը հերթացուցակի համեմատությամբ						57
6.	Նախկինում ևս բնակարան ստացած ընտանիքների քանակը						13
ա.	Մասնակի փոխհատուցված ընտանիքներ						12
բ.	Նախկինում ստացած բնակարանից հրաժարված ընտանիքներ						0
գ.	Հասցեների կրկնություն						0
7.	Բնակարանների հատկացումը չեղյալ հայտարարված դեպքեր						1
8.	Չպարզաբանված դեպքեր						0
9.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ արտոնությունների կետերի						
ա.	2-4	4-5	5-7	7-9	9-11	11-13	13 և ավելի
	0	0	0	20	6	1	118
10.	Բնակարան ստացած ընտանիքի ժամանակավոր բնակության վայրի տեսակը						
ա.	Տնակ		Հանրակացարան և ֆունկի տուն		Քարաշեն տուն		
	90		8		47		

6. 5 Բնակարանների բաշխման վիճակահանություն N 5
 վիճակահանության անցկացման ամիսը, օրը և տարին - 26.05. 2010 թ.

1.	Բաշխված բնակարանների քանակը						143
2.	Բաշխված բնակարաններն ըստ սենյակների քանակի						
ա.	1 սենյակ		2 սենյակ		3 սենյակ		
	40		31		72		
3.	Բնակարան ստացած անձանց անունների առկայությունն անօթևանների ցուցակում						128
ա.	Ընտանիքի այլ անդամների անունների առկայությունն անօթևանների ցուցակում						15
բ.	Բնակարան ստացած անձանց անունների բացակայությունն անօթևանների ցուցակում						0
4.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ անձերի քանակի						
ա.	1-3 անձ	3-5 անձ	5-7 անձ	7-9 անձ	9-11անձ	11-13 անձ	13 և ավելի
	34	35	54	17	3	0	0
5.	Բնակարան ստանալու իրավունքից զրկված ընտանիքի անդամների քանակը հերթացուցակի համեմատությամբ						103
6.	Նախկինում ևս բնակարան ստացած ընտանիքների քանակը						11
ա.	Մասնակի փոխհատուցված ընտանիքներ						4
բ.	Նախկինում ստացած բնակարանից հրաժարված ընտանիքներ						
գ.	Հասցեների կրկնություն						4
7.	Բնակարանների հատկացումը չեղյալ հայտարարված դեպքեր						1
8.	Չպարզաբանված դեպքեր						2
9.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ արտոնությունների կետերի						
ա.	2-4	4-5	5-7	7-9	9-11	11-13	13 և ավելի
	1	0	2	42	6	7	85
10.	Բնակարան ստացած ընտանիքի ժամանակավոր բնակության վայրի տեսակը						
ա.	Տնակ		Հանրակացարան և ֆոնդի տուն		Քարաշեն տուն		
	100		8		35		

6. 6 Բնակարանների բաշխման վիճակահանություն N 6
 վիճակահանության անցկացման ամիսը, օրը և տարին - 18.06.2010 թ.

1.	Բաշխված բնակարանների քանակը						290
2.	Բաշխված բնակարաններն ըստ սենյակների քանակի						
ա.	1 սենյակ		2 սենյակ		3 սենյակ		
	122		96		72		
3.	Բնակարան ստացած անձանց անունների առկայությունն անօթևանների ցուցակում						279
ա.	Ընտանիքի այլ անդամների անունների առկայությունն անօթևանների ցուցակում						11
բ.	Բնակարան ստացած անձանց անունների բացակայությունն անօթևանների ցուցակում						0
4.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ անձերի քանակի						
ա.	1-3 անձ	3-5 անձ	5-7 անձ	7-9 անձ	9-11անձ	11-13 անձ	13 և ավելի
	82	84	85	29	6	4	0
5.	Բնակարան ստանալու իրավունքից զրկված ընտանիքի անդամների քանակը հերթացուցակի համեմատությամբ						181
6.	Նախկինում ևս բնակարան ստացած ընտանիքների քանակը						28
ա.	Մասնակի փոխհատուցված ընտանիքներ						13
բ.	Նախկինում ստացած բնակարանից հրաժարված ընտանիքներ						0
գ.	Հասցեների կրկնություն						8
7.	Բնակարանների հատկացումը չեղյալ հայտարարված դեպքեր						2
8.	Չպարզաբանված դեպքեր						2
9.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ արտոնությունների կետերի						
ա.	2-4	4-5	5-7	7-9	9-11	11-13	13 և ավելի
	0	0	0	48	17	5	220
10.	Բնակարան ստացած ընտանիքի ժամանակավոր բնակության վայրի տեսակը						
ա.	Տնակ		Հանրակացարան և ֆոնդի տուն		Քարաշեն տուն		
	221		10		59		

**6. 7 Բնակարանների բաշխման վիճակահանությունների
ընդհանուր արդյունքներ**

1.	Բաշխված բնակարանների քանակը						1056
2.	Բաշխված բնակարաններն ըստ սենյակների քանակի						
ա.	1 սենյակ		2 սենյակ		3 սենյակ		
	440		352		264		
3.	Բնակարան ստացած անձանց անունների առկայությունն անօթևանների ցուցակում						996
ա.	Ընտանիքի այլ անդամների անունների առկայությունն անօթևանների ցուցակում						54
բ.	Բնակարան ստացած անձանց անունների բացակայությունն անօթևանների ցուցակում						0
4.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ անձերի քանակի						
ա.	1-3 անձ	3-5 անձ	5-7 անձ	7-9 անձ	9-11 անձ	11-13 անձ	13 և ավելի
	359	268	265	105	39	16	4
5.	Բնակարան ստանալու իրավունքից զրկված ընտանիքի անդամների քանակը հերթացուցակի համեմատությամբ						601
6.	Նախկինում ևս բնակարան ստացած ընտանիքների քանակը						91
ա.	Մասնակի փոխհատուցված ընտանիքներ						38
բ.	Նախկինում ստացած բնակարանից հրաժարված ընտանիքներ						13
գ.	Հասցեների կրկնություն						20
7.	Բնակարանների հատկացումը չեղյալ հայտարարված դեպքեր						9
8.	Չպարզաբանված դեպքեր						8
9.	Բնակարան ստացած ընտանիքներն ըստ արտոնությունների կետերի						
ա.	2-4	4-5	5-7	7-9	9-11	11-13	13 և ավելի
	17	0	14	404	80	31	510
10.	Բնակարան ստացած ընտանիքի ժամանակավոր բնակության վայրի տեսակը						
ա.	Տնակ		Հանրակացարան և ֆունդի տուն		Քարաշեն տուն		
	759		52		245		

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աղետի գոտում 2009-2013 թթ. բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում Գյումրու Մուշ 2 թաղամասում նախատեսված էր կառուցել միայն 1 և 2 սենյականոց բնակարաններ: Սակայն շինարարության մեկնարկից մի քանի ամիս անց, 2009 թ.-ին, ՀՀ կառավարության և «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագիրը ենթարկվեց փոփոխության և որոշվեց կառուցել նաև 3 սենյականոց բնակարաններ ի հաշիվ 1 և 2 սենյականոց բնակարանների: ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից տրված պարզաբանման համաձայն դա արվել է բազմաանդամ անօթևան ընտանիքների շահերից թելադրված: Այդ պատճառով նախօրոք նախատեսված 1320 բնակարանի փոխարեն Գյումրիում կառուցվեց միայն 1056 բնակարան:

Բնակբաշխման այս փուլը օրինականության և արդարության առումով խոցելի չէր, հիմնականում պահպանված էին օրենսդրությամբ սահմանված նորմերը: Անխոս, այդ առումով այն էականորեն տարբերվում էր անցած տարիներին աղետի գոտում իրականացված նմանատիպ գործընթացներից: Սակայն բնակբաշխումն առավել արդարացի և անօթևանների շահերից բխող կարող էր լինել, եթե կազմակերպական բնույթի մի շարք խնդիրներ ավելի վաղ լուծված լինեին:

Օրինակ՝ եթե նախքան բուն գործընթացի սկսվելը ՀՀ իշխանությունների և, ինչու ոչ, նաև հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված լինեին ուսումնասիրություններ՝ պարզելու այն խոչընդոտները, որոնք հարյուրավոր ընտանիքների խանգարեցին մասնակցել բնակբաշխման գործընթացի այս փուլին: Մասնավորապես, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով անօթևաններից պահանջվող փաստաթղթերի ձեռքբերման առկա դժվարությունները հաշվի առնելը և այդ որոշումներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելը թույլ կտար, որ առավել արտոնություններ ունեցող անօթևան ընտանիքներն այս փուլում օգտվեին բնակարան ստանալու իրենց իրավունքից:

Տեղին կլիներ, եթե նախքան բնակբաշխման գործընթացը իրականացված լիներ անօթևանների հերթացուցակների ուսումնասիրություն և դուրս հանված լինեին այն անձանց անուն-ազգանունները, որոնց հերթացուցակ էին ընդգրկել օրենսդրության պահանջներին ոչ համապատասխան: Նման մոտեցման դեպքում բնակբաշխման հանձնաժողովի աշխատանքն ավելի արդյունավետ կլիներ և հանձնաժողովը ստիպված չէր լինի մերժման ենթակա բնակարանային մի քանի հարյուր գործերի ուսումնասիրության վրա ժամանակ ծախսել:

Ծրագիրն իրականացնելիս մեզ համար ամենաէականը անկողնակալությունն էր, և այն պահպանելը երբեմն շատ դժվար էր լինում, քանզի կողմերի՝ անօթևանների և բնակբաշխման հանձնաժողովի մոտեցումները միմյանցից երբեմն սկզբունքորեն էին տարբերվում: Անօթևաններն առաջնորդվում էին արդարության և օր առաջ իրենց խարխուլ տնակներից ազատվելու ու բնակարաններ ունենալու շահերով, իսկ հանձնաժողովը՝ օրենքի տառով: Մեզ համար նման իրավիճակում դժվար էր, քանի որ ծրագիրը բնակբաշխման գործընթացի մոնիտորինգից բացի իր մեջ ներառում էր նաև անօթևանների շահերի ու օրինականության պաշտպանություն, խորհրդատվության տրամադրում և իրազեկում, ուստի մենք պարտադրված էինք հաշվի նստել թե՛ մեկի, թե՛ մյուսի մոտեցումների հետ:

7.1 Ձեռքբերումներ

Աղետի գոտում, որտեղ հազարավոր անօթևան ընտանիքներ մի կերպ պատասպարված են վաղուց բնակության համար ոչ պիտանի տնակներում, բնակարանների բաշխման գործընթացը չի կարող չհամարվել կարևորագույն միջոցառում և չգտնվել հասարակության ու հատկապես անօթևանների ուշադրության կենտրոնում: Թերևս նաև այդ պատճառով բնակարանների բաշխման գործընթացում շտապողականությունը տեղին չէ և անհրաժեշտ է այն կազմակերպել ամենայն բժախնդրությամբ: Նշենք նաև, որ յուրաքանչյուր անզգույշ հրապարակում կամ քայլ բուռն վրդովմունք է առաջ բերում անօթևանների շրջանում: Եվ քանի որ մեր այս ծրագրի խնդիրներից մեկն էլ հանրային իրազեկումն էր, մենք բավականին զգույշ էինք մեր հրապարակումներում, ներկայացնում էինք միմիայն բազմիցս ճշտված տեղեկատվություն: Առանձնակի ուշադրությամբ հետևեցինք նաև բնակարանների բաշխման գործընթացի վերաբերյալ հասարակության մեջ և ՋԼՄ-ներում առկա խոսակցություններին ու կարծիքներին: Մեզ համար էական էր, թե բնակարանների բաշխման 2009-2010 թթ. գործընթացի վերաբերյալ ինչպիսին կլինի հասարակության կարծիքը: Քանի որ բնակբաշխման հանձնաժողովում ընդգրկված էին նաև մեր կազմակերպության ներկայացուցիչները, մեզ համար բնակարանների օրինական և արդարացի բաշխումը մեկ այլ՝ կազմակերպության հեղինակության առումով ևս կարևոր էր: Կարող ենք ասել, որ հասարակական կարծիքը, ի տարբերություն նախորդ տարիների, ընդհանուր առմամբ դրական էր: Ուստի ծրագրի հիմնական ձեռքբերումը կարելի է համարել անօթևանների հավատի վերականգնումը բնակարանների բաշխման գործընթացի օրինականության նկատմամբ:

Մենք այցելությունների և հեռախոսագանգերի միջոցով հարյուրավոր անօթևանների հորդորեցինք օգտվել իրենց իրավունքներից և համապատասխան փաստաթղթեր հանձնել բնակարանների բաշխման հանձնաժողով՝ բնակարան ստանալու համար: Ինչպես նաև հարյուրավոր անօթևանների հրավիրեցինք մասնակցելու բնակարանների բաշխման վիճակահանությանը: Անօթևաններից շատերը երբեմն զարմացած հարցնում էին, թե այդ ի՞նչ է փոխվել երկրում, որ արդեն առանց որևէ նախապայմանի իրենց հրավիրում են բնակարան ստանալու...

Կարևորագույն ձեռքբերում էր նաև այդ գործընթացում պատշաճ հրապարակայնության ապահովումը: Այդ նպատակով մեր կողմից պարբերաբար, յուրաքանչյուր գործողության մասին տարածվեցին տասնյակ հաղորդագրություններ:

Ծրագիրը մեկնարկելիս անօթևանների շրջանում կատարած մեր առաջին իսկ ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ պարզապես անհրաժեշտ է կառավարության համապատասխան որոշումներում փոփոխություններ կատարելը: Օրինակ՝ 1056 բնակարանի համար բնակարանների բաշխման հանձնաժողով հրավիրվեց 2400 ընտանիք, սակայն կրկին կար ամբողջական փաստաթղթեր ունեցող ընտանիքների պակաս: Որովհետև երկրաշարժից 22 տարի անց հարյուրավոր ընտանիքներ ունեին բացակա անդամներ, որոնց նույնիսկ գտնվելու վայրի մասին շատերը վաղուց տեղեկություն չունեին, կամ բացակա անդամները արտերկրից տարաբնույթ պատճառներով չէին կարողանում պահանջվող լիազորագրերն ուղարկել: Մենք համապատասխան որոշումներում փոփոխություններ կատարելու մի շարք դիմում-առաջարկներ հղեցինք ՀՀ կառավարությանը: Մասնավորապես առաջարկեցինք վերանայել ՀՀ

կառավարության N 432 որոշումը և ժամանակավոր կացարաններում փաստացի բնակվող այն անօթևան ընտանիքներին, որոնք ունեն փաստաթղթերի համալրման խնդիրներ իրենց ընտանիքի անդամների Հայաստանից բացակայելու պատճառով, հնարավորություն ընձեռել օգտվելու իրենց բնակարան ստանալու իրավունքից՝ պայմանով, որ բնակարան ստացողը համապատասխան պարտավորագրով ստանձնի բացակայողների վերադառնալու դեպքում նրանց նկատմամբ բնակարանային պարտավորություններ:

ՀՀ կառավարությունը օգոստոսի 5-ին կայացած իր նիստում փոփոխություններ կատարեց 1999 թ. հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337 –Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին N 1402-Ն որոշման մեջ: Կատարված փոփոխություններով հնարավորություն տրվեց անօթևան, բնակարանի հավակնորդ ընտանիքների ներկա անդամներին՝ բնակարան ստանալու նպատակով բացակա անդամի անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու անհնարիության մասին գրավոր հայտարարությամբ օգտվելու բնակարան ստանալու իրենց իրավունքից: Նույն որոշման համաձայն՝ փաստաթղթեր չներկայացրած անդամի բնակարանային ապահովման նկատմամբ պետական պարտավորությունները համարվում են կատարմամբ դադարեցված: Անշուշտ, այդ փոփոխությունները, որոնք ևս կարելի է համարել շոշափելի ձեռքբերում, հազարավոր անօթևան այն ընտանիքներին, որոնք իրենց փաստաթղթերի ոչ ամբողջական լինելու պատճառով չկարողացան օգտվել բնակարանների բաշխման նախորդ փուլից, հնարավորություն կտան մասնակցել բնակարանների բաշխման առաջիկա փուլին: Սակայն ընտանիքի բացակա անդամներին որպես շահառու չդիտարկելով՝ ընտանիքներից շատերը կկորցնեն բնակմակերես: Այդ առումով ընդունված փոփոխությունները մի փոքր տարբերվում են մեր առաջարկած տարբերակից, որի տրամաբանությունն այն էր, որ ընտանիքներին հատկացվի ճիշտ այնքան սենյականոց բնակարան, որքան նրանք կորցրել էին:

Մեկ այլ դիմում-ուղերձով առաջարկեցինք Գյումրու Մուշ 2 թաղամասում բնակարան ստացած բազմանդամ և ինքնակամ բնակելի կառույցներ տնօրինող ընտանիքներին, հիմք ընդունելով ընթացիկ տարում ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, հնարավորություն տալ օրինականացնելու իրենց ինքնակամ կառույցները և թույլատրել նոր ստացած բնակարանները սեփականաշնորհել առանց ժամանակավոր կացարանների հանձնման:

2009-2010 թթ. բնակարանների բաշխման կարևորագույն ձեռքբերումը եղավ հավաստագրերի հանձնման և բնակարանների հատկացման վիճակահանության հրապարակային միջոցառումների անցկացումը, որը նախկինում երբևէ չէր կիրառվել:

Ձեռքբերում էր նաև անօթևանների հետ սերտ կապի հաստատումն ու նրանց անվճար իրավաբանական խորհրդատվության տրամադրումը: Շատ դեպքերում անօթևանները բնակբաշխման հանձնաժողովի կողմից տրված պատասխանների արդարության հարցում համոզվում էին միայն այն ժամանակ, երբ դրանք համընկնում էին մեր կողմից տրված պատասխանին:

Կարևոր էր նաև մեր պահանջից անմիջապես հետո նորակառույց բնակելի շենքերի սեյսմակայունության համալիր ստուգումների անցկացումը: Դրանք ՀՀ քաղաքաշինության նախարարի որոշմամբ իրականացվեցին այն ժամանակ, երբ

մենք նամակ-դիմում հղեցինք ՀՀ նախագահին ու վարչապետին: Նամակում մասնավորապես ասվում էր. «2009 թվականին, երբ աղետի գոտում և հատկապես Գյումրիում երկարատև դադարից հետո վերջապես վերսկսվեց բնակարանների կառուցումը, ցուրտ ու խոնավ տնակներում արդեն երկու տասնամյակ պատսպարված անօթեւան հազարավոր ընտանիքներում կրկին հույս ու հավատ արթնացավ, որ ի վերջո իրենք ևս կունենան ամուր, հարմարավետ եւ լուսավոր բնակարաններ: Սակայն դեռևս շինարարության ընթացքում գյումրեցի անօթեւան ընտանիքների շրջանում խոսակցություն տարածվեց կառուցվող բնակարանների կասկածելի որակ ունենալու մասին: Եվ խոսքը ամեննին հարդարման աշխատանքների որակի մասին չէ...»: «Ուստի դիմում ենք Ձեզ,- ասված էր նամակում,- ակնկալելով Ձեր միջամտությունը՝ ստեղծելու մի փորձագիտական հանձնաժողով, որը կանցկացնի ինչպես արդեն կառուցված ու կառուցվող, այնպես էլ առաջիկայում կառուցվելիք շենքերի որակի, ամրության ու սեյսմակայունության հրապարակային փորձաքննություն և արդյունքները կհանրայնացնի: Մենք ակնկալում ենք, որ նման հանձնաժողով ստեղծելու դեպքում դրանում համապատասխան մասնագետներից բացի կընդգրկվեն նաև աղետի գոտում գործող ՁԼՄ, ՀԿ եւ անօթեւան ընտանիքների ներկայացուցիչներ: Այլապես անհնար կլինի առանց այդ էլ մեծ վիշտ եւ գրկանքներ կրած անօթեւանների մեջ փարատել վախն ու անհանգստությունը: Նման հանձնաժողովի ստեղծումը եւ եզրակացությունների հանրայնացումը նաև վերջ կդնեն այն տեսակետներին, թե իբր կառուցվող շենքերի կասկածելի ամրության մասին խոսակցությունները տարածվում են միտումնավոր, որպեսզի նման հասարակական կարծիքն օգտագործվի որպես հարմար առիթ՝ բնակարանային շինարարությունը Գյումրիում դադարեցնելու համար»:

Ծրագրի իրականացման ժամանակահատվածում տեղի ունեցավ աղետի գոտում բնակարանների բաշխման հանձնաժողովի 24 նիստ: Մեր ներկայացուցիչները մասնակցեցին գրեթե բոլոր նիստերին, արեցին բազմաթիվ առաջարկություններ, մի շարք դեպքերում էլ մեր դիմումների հիման վրա վերականգնվեց օրինականությունը: Հաշվի առնելով մեր ուսումնասիրությունների արդյունքները, Գյումրու անօթեւանների հերթացուցակում հաշվառված մի շարք քաղաքացիների բնակարան ստանալու դիմումները մերժվեցին, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանով չեղյալ հայտարարվեցին իր նախորդ հրամաններով բնակարաններ հատկացնելու մասին որոշումներ, քանի որ մեր դիտարկումներով ի հայտ էին եկել այդ քաղաքացիների կողմից նախկինում բնակարանային փոխհատուցման իրավունքից օգտվելու փաստեր:

Կարևոր քայլ էր բնակարանի հավակնորդ բոլոր անձանց ցուցակների հայթայթումն ու մինչև վիճակահանության անցկացումը հեռուստատեսությամբ դրանց հրապարակումը: Այդ քայլով մենք միաժամանակ մի քանի խնդիր լուծեցինք.

1. իրազեկում անօթեւան ընտանիքներին
2. բնակարանների բաշխման գործընթացում թափանցիկության ապահովում
3. կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը նպաստում:

Ակնհայտ է, որ հասարակական մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն միջոցներից մեկն է: Բնակարաններ ստացող անձանց ցուցակների հրապարակումը նպաստեց այդ գործընթացում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելմանը: Յուրաքանչյուր անգամ, երբ մենք հրապարակում էինք ցուցակները, հեռուստադիտողների կողմից բազմաթիվ զանգեր էինք ստանում դրանցում առկա որևէ անձի կամ անձերի գործերը առավել ուշադիր դիտարկելու

առաջարկով: Եվ դա բնական էր, քանզի խարխուլ կացարաններում բնակվող անօթևանները գիտակցում էին, որ բնակարանների բաշխման գործընթացում արդարության ապահովումն ու ոչ անօթևաններին բնակարանների հատկացման դեպքերի բացառումը նպաստում էր հենց իրենցից յուրաքանչյուրի օր առաջ բնակարան ստանալու հնարավորության մեծացմանը:

Մեր կողմից ծրագրի անկողմնակալ և ակտիվ իրականացման վառ ապացույց ու կարևոր ձեռքբերում էր, նաև, բնակարան ստացած գյումրեցի անօթևաններին հավաստագրերի հանձնումը մեր կազմակերպությանը վստահելը: Նշենք, որ բնակարանների բաշխման գործընթացի կոռուպցիոն ռիսկեր պարունակող փուլերից մեկն էլ հենց հավաստագրերի հանձնումն է, երբ դրամներ են շորթվել այն քաղաքացիներից, որոնց տրվել են հավաստագրեր: Միայն հունիսի 1-ին մեր գրասենյակ հրավիրվեցին նախորդ երեք վիճակահանություններին մասնակցած 450-500 քաղաքացիներ: Ընդհանուր առմամբ միայն մայիս-հուլիս ամիսներին մեր կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցեցին շուրջ 1000 շահառուներ, ինչպես նաև նրանց հավաստագրեր, բանալիներ ստանալու և այլ գործողություններին մասնակցելու նպատակով այդ ամիսների ընթացքում մենք ունեցանք նրանց հետ շուրջ 2000 հեռախոսազանգ:

Մեր կողմից իրականացված, սակայն ծրագրում չնախատեսված գործողություններից էին նաև մեր բազմաթիվ այցելությունները նորակառույց բնակարաններ, բնակարանների ներսում կատարված ներքին հարդարման աշխատանքների որակի և կոմունալ-կենցաղային պայմանների ուսումնասիրությունները: Այդ ուսումնասիրությունների արդյունքներով մենք պատրաստեցինք հաղորդագրություններ, ինչպես նաև բաց նամակ՝ ուղղված ՀՀ վարչապետին և քաղաքաշինության նախարարին, Գյումրիում «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի կողմից Մուշ-2 թաղամասում կառուցված բնակարաններում կոմունալ-կենցաղային ծառայությունների ապահովման և խոցելի խմբերին նորակառույց բնակարաններ տեղափոխվելու խնդրում աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին: Մինչ մեր բաց նամակը նոր թաղամաս տեղափոխված բնակիչներին կոմունալ ծառայություններ մատուցելու պայմանագրերը պետք է կնքվեին սեփականաշնորհման վկայականների առկայության դեպքում միայն: Այդ գործընթացը կտևեր 1-2 ամիս, ինչը նշանակում է, որ բնակարան ստացած քաղաքացիները պետք է մնային առանց կոմունալ-կենցաղային պայմանների: Առավել ևս՝ երբ սեփականաշնորհման գործընթացը սկսելու առաջին նախապայմանը ժամանակավոր կացարանների հանձնումն էր անօթևանների կողմից: Ստացվում էր, որ բնակարան ստացած քաղաքացիները 1-2 ամիս պետք է ապրեին առանց ջրի, գազի և էլեկտրաէներգիայի: Մեր բաց նամակից հետո ՀՀ քաղաքաշինության նախարարությունը միջամտեց, որ կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները քաղաքացիների հետ պայմանագրեր կնքեն ոչ թե սեփականաշնորհման վկայականի, այլ բնակարանների հատկացման հավաստագրերի հիման վրա: Սա ևս կարևոր ձեռքբերում էր մեր ծրագրի համար: Ի դեպ, մենք մեր բաց նամակում նորակառույց թաղամաս տեղափոխված քաղաքացիներին կոմունալ-կենցաղային պայմաններով անհապաղ ապահովելու անհրաժեշտությունից բացի արծարծել էինք նաև ժամանակավոր կացարաններից նոր բնակարաններ տեղափոխվելու դժվարություններ ունեցող քաղաքացիներին և ընտանիքներին ուսանողների ներգրավման ճանապարհով աջակցություն ցուցաբերելու հարցը, սակայն ՀՀ քաղաքաշինության նախարարի մամուլի

քարտուղարի՝ ՁԼՄ-ներով հրապարակված և մեզ ուղղված պատասխան բաց նամակում այդ մասին ոչ մի խոսք չէր նշված: Պետք է ցավով նաև նշենք, որ ի տարբերություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, մարզային և տեղական իշխանությունները սովորաբար չեն անդրադառնում մեր կողմից առաջ քաշված խնդիրներին, ինչպես նաև չեն պատասխանում մեր հարցումներին:

Մեր նամակում մտահոգություն էինք հայտնել այն մասին, որ աղետի գոտում բնակարանների շահագործման ժամանակ միշտ էլ ի հայտ են գալիս մարդիկ և կազմակերպություններ, որոնք փորձում են «պղտոր ջրում ձուկ որսալ»: Առայժմ նման դեր կարծես թե ուզում է ստանձնել «Շիրակջրմուղկոյուղին»: Թեև բնակարանների սեփականաշնորհման, բոլոր տեսակի հաշվիչների ու դրանց տեղադրման վճարները կատարված են պետբյուջեի և «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի միջոցների հաշվին, այնուամենայնիվ այդ կազմակերպությունը մի իսկական քառու է ստեղծել՝ պահանջելով չպատճառաբանված գումարներ: Նշենք, որ մենք պատասխան ստացանք նաև ՀՀ վարչապետի աշխատակազմից: Մեր նամակը հրապարակելուց անմիջապես հետո «Շիրակջրմուղկոյուղին» դադարեցրեց ջրաչափերի և դրանց տեղադրման համար գումարների գանձումը: Իսկ տասնյակ քաղաքացիներից մինչ այդ գանձված գումարները համարվեցին ջրի վարձի կանխավճարային մուծումներ:

Մոնիտորինգն ունեցավ նաև ազդեցիկ կողմնակի արդյունք: Դա գործընթացի վրա ակտիվ ներգործումն էր, որի ազդեցությունը երկարաժամկետ է և կնպաստի իրավիճակի բարելավմանը նաև ապագայում:

7.2 Խոչընդոտները և առաջարկություններ

Ծրագրի ընթացքում մենք հանդիպեցինք նախկինում բնակարանների բաշխման գործընթացում տեղ գտած մի շարք զավեշտալի դեպքերի: Գյումրեցի անօթևաններից մեկի՝ Ս. Սարգսյանի հետ 2001 թվականին կնքվել էր պայմանագիր տնակը տեղահանելու մասին՝ այն պայմանով, որ նրան բնակարան է հատկացվելու Լինսի ծրագրով կառուցվող բազմաբնակարան շենքերից մեկի հինգերորդ հարկում: Սակայն հետագայում այդ շենքը կառուցվել է ընդամենը չորս հարկով: Այնուհետև մարզպետարանը նույն քաղաքացուն մեկ այլ ամրացված շենքից է բնակարան հատկացրել: Բնակարանը սեփականաշնորհելուց հետո ի հայտ է եկել այդ բնակարանի նախկին տերը և դատական կարգով վերականգնել է իր իրավունքները: Եվ քանի որ Ս. Սարգսյանին բնակարան է հատկացվել, նրա անուն-ազգանունը դուրս է հանվել Գյումրու անօթևանների հերթացուցակից: Իսկ ՀՀ կառավարության 432-րդ որոշմամբ 2008 թ. դեկտեմբերի 1-ից անօթևանների հաշվառում այլևս չի իրականացվում: Եվ ստացվում է, որ այդ քաղաքացին և՛ բնակարան չի ստացել, և՛ հնարավորություն չունի վերահաշվառվելու անօթևանների հերթացուցակում:

Նմանատիպ մեկ այլ դեպքի մասին ևս: Մեր դիտարկումների ընթացքում բնակարանների վիճակահանությանը մասնակցած քաղաքացիներից մեկի մասին հայտնաբերեցինք տեղեկություն, որ նրա ընտանիքը նախկինում բնակարան էր ստացել: Մենք այդ ընտանիքի գործի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով համապատասխան հարցում ուղարկեցինք քաղաքաշինության նախարարություն: Ստացված պատասխանի համաձայն՝ այդ ընտանիքին 24

համարը կրող բնակարանն է հատկացվել մի շենքում, որը, ինչպես պարզվեց, բաղկացած է ընդամենը 8 բնակարանից:

Շղան նաև մի շարք դեպքեր, երբ քաղաքացիները դիմելով մեզ՝ հարցնում էին, թե արդյոք իրենք կարող են օգտվել երկրաշարժին կորցրած բնակարանի դիմաց փոխհատուցումից, նշելով, որ իրենք նախկինում բնակարաններ ոչ թե ստացել են անվճար, այլ «գնել են»... Երբ մենք պատասխանում էինք, որ իրենց անուն-ազգանունները դուրս են հանված անօթևանների հերթացուցակից, իսկ իրենց, այսպես ասած, «գնված» բնակարանները հենց նույն պետության կողմից փոխհատուցումն են, նրանք սովորաբար չէին համաձայնում մեզ հետ, պնդելով, որ այդ բնակարանները ոչ թե ստացած, այլ գնված են:

Բնակարանների բաշխման հանձնաժողովը երբեմն էլ անօթևաններից պահանջում էր տարօրինակ փաստաթղթեր, օրինակ՝ ասենք, չամուսնացած անձանցից տեղեկանք այն մասին, որ իրենք իրոք ամուսնացած չեն, կամ ութսունն անց քաղաքացիներից պահանջվում էր ծննդյան վկայական և այլն: Իհարկե, երբ այդ մասին իրազեկում էինք ՀՀ քաղաքաշինության նախարարին, նա հիմնականում կանխում էր նման փաստաթղթերի պահանջը:

Մեկ այլ ուշագրավ դեպքի մասին: 2010 թ. հուլիսի 17-ի դրությամբ 1056 բնակարան ստացած քաղաքացիներից բանալիներ էին ստացել 1020-ը: ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից անօթևան ընտանիքներին բնակարան հատկացնելու հրամանագրից հետո մինչև բանալիներ ստանալը բնակբաշխման հանձնաժողովը Գյումրու քաղաքապետարանի կողմից ստացել էր գրություններ այն մասին, որ բնակարան ստացած երկու միայնակ թոշակառուներ և երկու 80-ամյա ամուսիններ մահացել են , այդպես էլ չհասցնելով բնակարանամուտ տոնել: Նախարարը իր հրամանագրերով չեղյալ էր հայտարարել այդ քաղաքացիներին բնակարաններ հատկացնելու որոշումները: Սակայն հետագայում պարզվեց, որ այդ 80-ամյա ամուսիններից, ի հեճուկս քաղաքապետարանի, միայն մեկն էր մահացել: Բնականաբար քաղաքաշինության նախարարը ստիպված էր ևս մեկ անգամ վերանայել իր հրամանագիրը:

Տնակներից տարածքների ազատման գործընթացը ևս լի էր մարդկային սթափ տրամաբանության շրջանակներում չտեղավորվող դեպքերով: Գյումրու կահույքի նախկին ֆաբրիկայի տարածքում տեղադրված տնակում 22 տարի շարունակ ապրող մի ընտանիքի այդ ձեռնարկության սեփականատերը չէր թույլատրում քանդել իրենց տնակը և տարածքը հանձնել: Եվ դա՝ այն պարագայում, երբ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ բնակարան ստանալու կարևոր նախապայմաններից մեկը ժամանակավոր կացարանից տարածքի ազատումն է: Ձեռնարկության սեփականատիրոջ պնդմամբ ինքն այդ ամբողջ տարածքը տնակների հետ միասին սեփականաշնորհել է...

Տեղական, տարածքային և հանրապետական իշխանությունների կողմից ընդունված ոչ ճկուն որոշումների պատճառով աղետի գոտու հարյուրավոր անօթևաններ հայտնվում են նման անհեթեթ և ծանր իրավիճակներում:

Հազարավոր անօթևանների գործերի ուսումնասիրությամբ և նրանց հետ անմիջական շփումներից մենք կրկին համոզվեցինք, որ աղետի գոտում թշվառությունն ու սոցիալական ծանր պայմանները նաև հոգեբանական առումով են իրենց խոր հետքը թողել բազմաթիվ ընտանիքների վրա: Մենք հանդիպեցինք այնպիսի երևույթների, որոնք հարիր չէին հայ մարդուն և հայ ընտանիքին: Մի դեպքում ազգականները փորձում էին բնակարան ստանալ երկրաշարժին զոհված

իրենց հարազատի ծնողագուրկ երեխաների փոխարեն: Մեկ այլ դեպքում որդին չէր համաձայնում փաստաթղթերը հանձնել հանձնաժողով՝ իր հարազատ հոր հետ բնակարան ստանալու համար: Ծնողին ծերանոց նետած զավակներից մեկն էլ փորձում էր միայնակ տնօրինել նորակառույց բնակարանը: Ավաղ, նման կարգի դեպքերը բազմաթիվ էին:

Գյումրիում 2009-2010 թթ. բնակարանների բաշխման գործընթացի կազմակերպիչներին, անտարակույս, չես մեղադրի շտապողականության մեջ: Սակայն ընթացիկ տարվա գործընթացի լավագույն դասը կլինի այն, որ բնակբաշխման հաջորդ փուլին ՀՀ իշխանություններն ու համապատասխան հանձնաժողովը պատրաստվեն ավելի վաղ: Առավել ևս՝ ի նկատի ունենալով, որ եթե այս փուլում ընդամենը 1056 բնակարաններ կառուցվեցին ու բաշխվեցին միայն Գյումրիում, ապա հաջորդ տարի նախատեսվում է Շիրակի մարզում շահագործման հանձնել 1856 բնակարաններ, որոնք հատկացվելու են ինչպես Գյումրիում, այնպես էլ մարզի տասնյակ այլ համայնքներում բնակվող անօթևաններին:

Բնակարանների բաշխմանը նախօրոք պատրաստվելու առավելություններից մեկն էլ կլինի այն, որ ունենալով անօթևանների ամբողջական գործերը, հնարավոր կլինի առավել հստակ որոշել, թե որքա՞ն և քանի՞ սենյականոց բնակարաններ են անհրաժեշտ, որպեսզի դրանք ըստ այդ պահանջի էլ կառուցվեն: Օրինակ, անցած բնակբաշխման գործընթացին չկարողացան մասնակցել 4 սենյակի սպասող անօթևան ընտանիքները՝ միայն այն պատճառով, որ բնակարանաշինության այդ փուլում պարզապես 4 սենյականոց բնակարանների կառուցում նախատեսված չէր:

Դիտարկելով և վերլուծելով բնակբաշխման գործընթացը, մենք ուզում ենք անել հետևյալ առաջարկությունները.

- բնակարանները հատկացնելիս պետք է առավելագույնս պահպանել հերթականությունն ըստ անօթևանների արտոնությունների,
- նույն արտոնություններն ունեցող անօթևան ընտանիքներից առաջնահերթությունը պետք է տրվի նախկինում մասնակի չփոխհատուցված ընտանիքին,
- խոցելի խմբերին առնչվող պետական ծավալուն միջոցառումների ժամանակ տրամաբանական կլինե՞ր ՀՀ կառավարության որոշմամբ գեղջել նրանցից պահանջվող տեղեկանքների վճարները,
- ՀՀ կառավարության 432-րդ որոշումը պետք է լինի ճկուն, մշտապես ենթակա փոփոխության, նրանում կատարելով լրացումներ և փոփոխություններ՝ ելնելով խոցելի խմբերի կոնկրետ խնդիրներից ու շահերից:
- Աղետի գոտում կան հարյուրավոր այնպիսի անօթևան ընտանիքներ, որոնք երկու կամ ավելի ընտանիքով գրանցված են նույն հասցեում և հավակնում են հատկացվելիք նույն բնակարանին: Շատ դեպքերում այդպիսի ընտանիքներում չի կայանում փոխհամաձայնություն հասանելիք բնակարանի պատկանելիության և համապատասխան փաստաթղթերի փաթեթը ձևավորելու ու հանձնաժողով ներկայացնելու առումով: Ուստի նպատակահարմար կլինի, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ կատարվի լրացում և վերը շարադրված դեպքերում տվյալ բազմանդամ ընտանիքների անդամների փոխհամաձայնությամբ նրանց հատկացվեն առանձին բնակարաններ: Իհարկե, նման մոտեցումն իրականանալի է, եթե տվյալ անօթևանները 2 և ավելի սենյականոց բնակարանի հավակնորդներ են:

Եվ վերջապես, հարկ է ևս մեկ անգամ նշել, որ Գյումրիում առկա են սոցիալ-տնտեսական ծայրահեղ ծանր վիճակում գտնվող և ժամանակավոր կացարաններում բնակվող հարյուրավոր այնպիսի անօթևան ընտանիքներ, որոնք հաշվառված չեն

անօթևանների հերթացուցակում և ենթակա չեն պետության կողմից բնակարանային փոխհատուցման: Մակայն պետությունը չպետք է անտեսի այդ իրողությունը: Տեղական, տարածքային և հանրապետական իշխանությունները անօթևանների բնակարանային խնդիրները լուծելու ցանկություն ունեցող միջազգային հիմնադրամներին և անհատ բարերարներին պետք է հուշեն, որ նրանք օգնեն հատկապես այդ կարգավիճակում հայտնված ընտանիքներին:




Լուսանկարում՝ բնակարանների հավաստագրերի տրամադրումն անօթևաններին «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի գրասենյակում, հուլիս 2010 թ.

8. ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԳՐԱՖԻԿՆԵՐԻ ՏԵՍՔՈՎ

Գրաֆիկ 1

Գյուղրու անօթևանների հերթացուցակն ըստ բնակարանների սենյակների պահանջարկի 2009 թ. դրությամբ


1 սենյակ-1462 բն.
 2 սենյակ-1343 բն.
 3 սենյակ-1268 բն.
 4 սենյակ-191 բն.
 5 սենյակ-5 բն.
 ընդամենը - 4269 բն.



Գրաֆիկ 2

Բաշխված բնակարաններն ըստ սենյակների քանակի 2009-2010 թթ.


1 սենյակ-440 բն.
 2 սենյակ-352 բն.
 3 սենյակ-264 բն.
 ընդամենը - 1056 բն.



Գրաֆիկ 3

Բնակարան ստացած ընտանիքներն ըստ անձերի քանակի


1-3 անձ - 359
 3-5 անձ - 268
 5-7 անձ - 265
 7-9 անձ - 105
 9-11 անձ - 39
 11-13 անձ - 16
 13 և ավելի - 4



Գրաֆիկ 4

Բնակարան ստացած ընտանիքներն ըստ արտոնությունների կետերի


2-4-րդ կետեր – 17 ընտ.
 4-5-րդ կետեր- 0 ընտ.
 5-7-րդ կետեր-14 ընտ.
 7-9-րդ կետեր-404 ընտ.
 9-11-րդ կետեր-80 ընտ.
 11-13-րդ կետեր-31 ընտ.
 13 և ավելի կետեր-510



Գրաֆիկ 5

Բնակարան ստացած ընտանիքների ժամանակավոր բնակության վայրի տեսակները


տնակ – 759
 հանրակացարան և ֆոնդի տուն – 52
 քարաշեն տուն - 245



Գրաֆիկ 6 (Ինտերնետային հարցում)

Ինչպես է գնահատվել բնակարանների բաշխման գործընթացը Գյումրիում

արդարացի – 38%
 բավարար – 43 %
 շատ վատ – 9%
 վատ – 6 %
 տեղյակ չենք – 4 %



9. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Աղետի գոտու անօթևան ընտանիքներին բնակարանների բաշխումն անցած տարիներին ընթացել է կոռուպցիոն դրսևորումներով: Ավելին, այն չի կրել համակարգված բնույթ, անհրաժեշտ վերահսկողության բացակայությունն էլ իր հերթին պարարտ հող է ստեղծել օրինախախտումների համար:

Բնակարանների բաշխման գործընթացն ընդհանուր առմամբ բաղկացած է մի քանի հիմնական գործառույթներից՝ անօթևանների հաշվառում և հերթացուցակի կազմում ըստ արտոնությունների, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքում և դրանց իսկության ստուգում, բնակարանների տրամադրման որոշման կայացում, հասցեագրում կամ բնակարանների բաշխում վիճակահանությամբ, և, ի վերջո, համայնքապատկան կամ վաղուց սեփականաշնորհված տարածքների ազատումը ժամանակավոր կացարաններից: Թվարկվածը հիմնական բաղադրիչներն են, որոնցից յուրաքանչյուրն էլ հղի է կոռուպցիոն ռիսկերով:

9.1 Հերթացուցակ

Աղետի գոտում արտահերթ բնակարան ստանալու իրավունքի վավերացումը և անօթևանների հաշվառումն իրականացվում է ՀՀ կառավարության 1999թ. N 432 և 2008թ. 1024-Ն որոշումներով: Ըստ այդ որոշումներով հաստատված «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հասկացման կարգի»՝

- բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն այն քաղաքացիները և նրանց ընտանիքի անդամները, որոնց կացարանները (բնակարանը, բնակելի տունը, տան մի մասը) երկրաշարժի հետևանքով քանդվել կամ բնակվելու համար դարձել են ոչ պիտանի,

- աղետի գոտու բնակավայրերում բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառումն իրականացնում է նրանց մշտական բնակավայրի համայնքի ղեկավարը,

- բնակարան ստանալու համար քաղաքացիները դիմումները ներկայացնում են ըստ բնակության վայրի՝ համայնքի ղեկավարին:

Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերահաշվառման վերջնաժամկետ ՀՀ կառավարության 2008թ. N 1024-Ն որոշմամբ սահմանվել էր 2008 թ. նոյեմբերի 1-ը:

Նախ ասեմ, որ վերոհիշյալ որոշումներում առկա «արտահերթ» բառը որևէ մեկի մոտ թյուր տպավորություն թող չստեղծի, թե դա նշանակում է շուտափույթ. հավանաբար այս պարագայում այդ բառը ... բառիս բուն իմաստով չի գրված, իսկ աղետի գոտում այն կարող է և 22 տարուց ավելի տևել:

Ինչևիցե, այդ որոշումների համաձայն աղետի գոտում բնակարանների բաշխումից կարող են օգտվել այն քաղաքացիները, ովքեր հասցրել են հաշվառվել մինչև նշված ժամկետը: Միայն Գյումրու անօթևանների հերթացուցակում մինչև 2009-2010 թթ. բնակբաշխումը կար այդպիսի կարգավիճակ ունեցող 4245 անօթևան ընտանիք:

Ի դեպ, բնակարան ստանալու իրավունքը վերականգնել կամ առնվազն հերթացուցակում հաշվառման կանգնել հնարավոր է նաև դատական ճանապարհով, հիմնականում այն դեպքերում, երբ տեղական իշխանությունները քաղաքացուն ինչ-ինչ պատճառներով չեն հաշվառել: Գյումրու անօթևանների հերթացուցակում դատական ճանապարհն անցած բազմաթիվ քաղաքացիներ կան: Առհասարակ դատական ճանապարհով բնակարանային իրավունքի վերականգնման թեման բավական տարողունակ է և արժանի է հատուկ ուսումնասիրման: Ինքս առիթ ունեցել եմ ծանոթանալու նմանատիպ մի քանի վճիռների: Դրանցում կան այնպիսիները, որոնց ակնհայտորեն թխած ու բառիս բուն իմաստով սարքովի լինելը պարզապես հնարավոր չէ չկասկածել. դե, մենք մեր դատարաններին լավ գիտենք: Ասենք, որ մեր տեղեկությունների համաձայն այդ ճանապարհը մեկ տարուց ավելի է՝ փակ է: Հենց իրենց՝ դատավորների խոսքերով, վերևից դատարաններին իջեցված հատուկ ցուցում կա բնակարանային իրավունքի վերականգնման ոչ մի գործ վարույթ չվերցնելու մասին: Մոտավորապես հասկանալի են նման հրահանգի դրդապատճառները, որպիսիք են անօթևանների ցուցակները չավելացնելը, դատական վճիռների օրինականության հանդեպ վերսններում նստածների մեջ ևս անվստահության առկայությունը, անօթևանների հանդեպ պետության պարտավորություններն օր առաջ ավարտված համարելու ձգտումը և այլն:

Բոլորիս է հայտնի, որ հետերկրաշարժյան տարիներին սոցիալ-տնտեսական և այլ պայմանների պատճառով Հայաստանից ու հատկապես ադետի գոտուց հազարավոր ընտանիքներ արտագաղթեցին: Եվ փաստորեն երկրաշարժից իրենց բնակարանները կորցրած, սակայն վերահաշվառման ժամանակ Հայաստանից բացակայող անօթևան ընտանիքները գրկված են բնակարան ստանալու իրավունքից: Ավելին, նույն որոշման համաձայն՝ սահմանված ժամկետում դիմում չներկայացրած անձանց նկատմամբ բնակարանների արտահերթ հատկացման մասով պետական աջակցության պարտավորությունները համարվում են դադարեցված: Եվ սա այն դեպքում, երբ ադետի գոտում կան 2008-ից հետո Հայաստան վերադարձած ու նման կարգավիճակում հայտնված բազմաթիվ ընտանիքներ, որոնց թվաքանակը գնալով ավելանում է:

Այնուամենայնիվ այդպիսի ընտանիքների խնդրին, տարբեր մակարդակների իշխանավորների կողմից տրված հավաստիացումների համաձայն, պետությունը մտադիր է անդրադառնալ 2008 թ.-ին հաստատված հերթացուցակներում առկա անօթևանների փոխհատուցումից հետո միայն:

Անօթևանների հերթացուցակում հաշվառվելն իհարկե առաջին նախապայմանն է ապագայում բնակարանատեր դառնալու համար, սակայն ոչ պակաս կարևոր է, թե քաղաքացին հերթացուցակի որ հորիզոնականում է հաշվառվում: Իսկ դա կախված է անօթևանի ունեցած առաջնահերթություն կամ արտոնություն կոչվածից, որը նույնպես սահմանված է ՀՀ կառավարության N 432 որոշմամբ:

Ընդհանուր առմամբ հերթացուցակը բաղկացած է 30 կետից, իսկ որոշ կետեր էլ իրենց հերթին՝ բազմաթիվ ենթակետերից: Իսկ վերը նշված, այսպես ասած, արտոնությունները ուժի մեջ են, եթե դրանք առկա են եղել մինչև 1999 թ. հունվարի մեկը, այսինքն դրանից հետո հերթացուցակում բնակարան ստանալու առաջնահերթությունը կարող է փոփոխվել միայն համայնքի ղեկավարի միջնորդությամբ և բնակարանների բաշխման հանձնաժողովի համաձայնությամբ: Այստեղ անօթևանի առաջնահերթություն կամ արտոնություն ասվածը բավական

հարաբերական հասկացություն է և բնակարան հատկացնելու որոշում կայացնողներին հնարավորություն է տալիս հարցին մոտենալու ըստ սեփական հայեցողության, այսինքն առկա է կոռուպցիոն ռիսկը: Բնակարանների սպասող անօթևանների շրջանում և բնակարանների բաշխման հանձնաժողովում երբեմն վեճի առարկա են դառնում հենց այդ՝ այս կամ այն ընտանիքի առաջնահերթության վերանայման կամ համայնքի ղեկավարի միջնորդագրերը հիմք ընդունելով հերթացուցակի ստորին մասերում ընդգրկված որևէ ընտանիքին արտահերթ բնակարան հատկացնելու դեպքերը: Օրինակ՝ բնակբաշխման այս փուլում նման միջնորդությամբ բնակարաններ հատկացվեցին Գյումրիում կառուցվող «Պատվո բլուր» հուշահամալիրի տարածքում բնակվող մի քանի ընտանիքների, որոնք հերթացուցակում 29 և 30-րդ կետերի արտոնություններ ունեին: Բնակարան հատկացնելու ժամանակ առավել առաջնահերթություն ունեցող ընտանիքներն իրավացիորեն բողոքեցին, որ հերթացուցակի ավելի ստորին մասում հաշվառված անձանց բնակարան տալով մեխանիկորեն իրենց հերթը հետ է ընկնում:

Անօթևանների ցուցակների հերթականությունը երբեմն վերանայվում է բնակարանների բաշխման ժամանակ հանձնաժողովի կողմից վերջնական ուսումնասիրություններից հետո, երբ պարզվում է, որ մի դեպքում համապատասխան որոշումը շրջանցվել է և հաշվի են առնվել ավելի ուշ, 1998 թ.-ից հետո ի հայտ եկած ու տվյալ ընտանիքին առաջնահերթություն բերող բաղադրիչները, իսկ մյուս դեպքում ճիշտ հակառակը՝ սահմանված ժամկետում եղածներն անտեսվել են: Նման դեպքերը երբեմն էլ բացահայտվում են հենց իրենց՝ անօթևանների կողմից: Յուրաքանչյուր անգամ բնակարանների վիճակահանության մասնակիցների ցուցակները հրապարակելուց հետո մենք ստանում ենք նման բողոքներ, միայն թե շատ դեպքերում բողոքողները խուսափում են նշել որևէ մեկի անուն - ազգանունը: Ուստի այդպիսի միջնորդություններում ևս առկա է կոռուպցիոն ռիսկը:

Ինչպես արդեն ասացի, այնուամենայնիվ առավել կարևորը հերթացուցակում հայտնվելն է, որի համար անհրաժեշտ է ունենալ կամ ձեռք բերել երկրաշարժից փրկված կամ առնվազն բնակության համար ոչ պիտանի դարձած բնակարանի հասցեի գրանցում: Ադետի գոտում անցած տարիներին բազմաթիվ են խոսակցություններն այն մասին, որ բազմաթիվ անօթևան ընտանիքների բնակարանների հասցեներում հայտնվում են այնպիսի մարդկանց գրանցումներ, ովքեր որևէ առնչություն չեն ունեցել տվյալ անօթևան ընտանիքի հետ: Լինում են դեպքեր, երբ տվյալ ընտանիքն իր բնակարանի հասցեում չգիտես ինչպես հաշվառված անձնավորության մասին կամ առհասարակ չի իմանում, կամ իմանում է միայն այն ժամանակ, երբ վերջապես գալիս է նաև իրենց բնակարան ստանալու հերթը... Իհարկե, տվյալ պարագայում նման անօթևան ընտանիքը հայտնվում է աննախանձելի վիճակում և ընկնում է քաշքշուկների մեջ:

Մենք գիտենք նաև, որ ադետի գոտում հարյուրավոր ընտանիքներ 1988-ի դաժան երկրաշարժին զոհվեցին ամբողջովին: Իսկ նման ընտանիքների հասցեներում անօրինական գրանցման և այդ ճանապարհով բնակարան ստանալու դեպքերի բացահայտումը գրեթե անհնարին է:

Առհասարակ անօթևանների հերթացուցակում առկա են 3 տեսակի կարգավիճակ ունեցող ընտանիքներ՝ մինչև օրս կորցրած բնակարանի դիմաց ամենևին չփոխհատուցված ընտանիքներ, մասնակի փոխհատուցված, այսինքն մեկ անգամ արդեն բնակարան ստացած, սակայն երկրաշարժին կորցրած սենյակների

թվից պակաս թվով սենյակներ ստացած ընտանիքներ, և երրորդ՝ միայն դրամական փոխհատուցման ենթակա քաղաքացիներ: Վերջիններս այն ընտանիքներն են, որոնց վրա տարածվում է նախկին՝ 1998 թ.-ից առաջ գործող որոշումը, ըստ որի անօթևան ընտանիքներին բնակավայրերում հատկացվում էր ընտանիքի անդամների թվի հաշվով և ընտանիքի մի մասը նախկինում ստացել է բնակարան:

9.2 Բնակարանների հատկացում

Ադետի գոտում 1988 թվականի դեկտեմբերյան երկրաշարժից ի վեր բնակարանների բաշխումը երբեք չի կրել համակարգված բնույթ: Գյումրիում մինչև 2003 թվականը բնակարանները բաշխվում էին քաղաքապետարանի, 2003-2008 թթ.՝ Շիրակի մարզպետարանի կողմից: Իսկ 2008 թվականից, ՀՀ կառավարության 1999 թ. N 432 որոշմամբ սահմանված «Ադետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգի» մեջ կատարված փոփոխություններից հետո, բնակարանների բաշխումն իրականացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարը՝ իր որոշմամբ ստեղծած հանձնաժողովի միջոցով: Խորհրդային տարիների մայրամուտին ադետի գոտում բնակարանաշինություն իրականացնող շինկազմակերպությունները ևս բնակարանների իրենց մասնաբաժինն ունեին՝ 10-20 տոկոս: Իրենց իսկ կողմից կառուցված բնակարանների մի մասն իրենք էին բաժանում, հատկացնելով հիմնականում տվյալ շինարարական կազմակերպությունում աշխատողներին: Երբեմն էլ առանց հաշվի առնելու՝ տվյալ ընտանիքը երկրաշարժից բնակարան կորցրել է թե ոչ:

1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժը միայն Գյումրիում հողին հավասարեցրեց շուրջ 22 հազ. բնակարան: Անցած 20 տարիների ընթացքում մոտավոր հաշվարկներով Գյումրիում կառուցվել է 18.000 – 19.000 բնակարան, որից 3000-ը՝ 2001-2008 թվականներին: Սակայն մինչև բնակբաշխման ներկա փուլը ավելի քան 4000 ընտանիքներ դեռևս հաշվառված էին Գյումրու անօթևանների հերթացուցակում:

Համակարգված և մեկ միասնական ցուցակում հաշվառված չեն նաև տարբեր ծրագրերով բաշխված բնակարանները: Պետության և տարբեր բարեգործական ծրագրերով, մի շարք նախարարությունների կողմից քաղաքացիներին, այդ թվում պաշտպանության նախարարության կողմից անօթևան զինվորականներին կամ նրանց ընտանիքներին հատկացված բնակարաններն ու բնակարաններ ստացած քաղաքացիների ցուցակները ևս միավորված չեն: Ավելին, նրանցից ոչ բոլորի անուններն են հանված Գյումրու անօթևանների հերթացուցակից: Այդպիսի վիճակ է նաև 2009 թ. Vivacell ընկերության կողմից 20-ից ավելի բնակարանների նվիրաբերության պարագայում: Սովորաբար ոչ պետության կողմից բնակարան ստացած անօթևան ընտանիքները նոր բնակարանի հասցեում իրենց ընտանիքի ոչ բոլոր անդամներին են գրանցում, ուստի նրանց ընտանիքները համաձայն ՀՀ կառավարության N 432 որոշման չեն համարվում պետության կողմից երկրաշարժից կորցրած բնակարանի դիմաց փոխհատուցված, շարունակում են մնալ պահանջատեր և անօթևանների ցուցակում հաշվառված:

Երկրաշարժից տասը տարի անց փոխելով բնակարանների հատկացման կարգը, ՀՀ կառավարությունը 1999 թ.-ի հունվարի 10-ին ընդունեց N 432 որոշումը, որի համաձայն բնակարան է հատկացվում ոչ թե անօթևան ընտանիքի անդամներին

և բնակմակերեսն էլ չի հաշվարկվում ըստ նրանց փաստացի թվի, այլ բնակարանը տրվում է միասնական ընտանիքին և սենյակների քանակն էլ այնքան, որքան նրանք կորցրել են երկրաշարժին: Իհարկե՝ եթե ընտանիքի անդամների թիվը չի պակասել: Որոշման մեջ այդպիսի փոփոխությունը, փաստորեն, ոչ միայն խոչընդոտում է աղետի գոտու ընտանիքների աճին, այլև բազմանդամ հարյուրավոր ընտանիքների բնակարանով ապահովելուց հետո էլ թողնում է կիսով չափ անօթևան, քանզի 5-ից մինչև 15 անդամներ ունեցող ընտանիքները, ստանալով մեկ կամ երկու սենյականոց բնակարան, մեծ ցանկության դեպքում անգամ չեն կարող բնակվել ստացած այդ նոր բնակարանում: Նման բազմանդամ ընտանիքները պարտադրված կիսվում են, և ընտանիքի մի մասը շարունակում է բնակվել ժամանակավոր կացարաններում, արդեն՝ առանց անօթևանի կարգավիճակի:

Կարգավիճակ չունեցող ասօթևանների ներկայիս մեծ քանակի առաջացմանը նպաստեց նաև անօթևանության խնդիրը բնակարանների գնման վկայագրերի միջոցով լուծելու տարբերակի կիրառումը: Աղետի գոտում անցած տարիներին բնակարանների գնման վկայագրեր են տրամադրվել 1308 ընտանիքների, որից 996-ը՝ Գյումրիում: ԲԳՎ-ն աղետի գոտում դարձավ բնակբաշխման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի խթանման պատճառ: Հարյուրավոր անօթևաններ, մասնակցելով ԲԳՎ ծրագրին, բնակարան գնելու համար նախատեսված գումարները տարբեր զարտուղի ճանապարհներով, հիմնականում բնակարանի ձևական առք ու վաճառք ձևակերպելով, բանկերից դուրս բերեցին և օգտագործեցին այլ նպատակներով: Այդ գործարքներին մասնակցություն ունեցան նաև մի շարք բանկեր, որոնք անօրինական գործարքների հանդեպ այք փակելու նպատակով անօթևաններից շորթում էին իրենց բաժինը: Բնակարան գնելու համար հատկացված գումարներից բաժին էր հանվում նաև այն ընտանիքներին, ովքեր համաձայնում էին իրենց բնակարանները ձևական առք ու վաճառքի առարկա դարձնել: Եվ փաստորեն ԲԳՎ կոչվող ծրագրով հատկացված գումարները տարբեր համամասնություններով բաժանվում էին երեք մասի՝ բանկի համապատասխան ներկայացուցչի, անօթևան ընտանիքի և ձևականորեն գնվող բնակարանի տիրոջ միջև: Այդ ծրագրի պատճառով հարյուրավոր անօթևան ընտանիքներ աղետի գոտում փաստորեն զրկվեցին երբևէ բնակարան ունենալու հեռանկարից:

ՀՀ կառավարության N 432 որոշումը մի շարք առումներով ևս վիճահարույց է: Այդ որոշմամբ աղետի գոտու անօթևան ընտանիքի անդամներին հատկացվում է երկրաշարժին կորցրած բնակարանի սենյակների թվից պակաս սենյակներով բնակարան, եթե ընտանիքի անդամների թվաքանակը պակասել է, սակայն մյուս դեպքում, եթե անօթևանի ընտանիքի կազմը ավելացել է, սենյակների քանակը չի ավելացվում և տրվում է ճիշտ այնքան, որքան կորցրել են երկրաշարժին: Այս կետը նպաստում է նաև կոռուպցիոն ռիսկին, քանզի բնակարան ստացող ընտանիքը, որպեսզի չկորցնի իրեն հասանելիք բնակմակերեսը, ստիպված դիմում է պահանջվող փաստաթղթերը մի շարք ճանապարհներով հայթայթելու կամ ազգականներից որևէ մեկին ձևականորեն որդեգրելու քայլին: Այս որոշումը մեկ այլ պարագայում ևս կոռուպցիոն ռիսկի նախադրյալ է ստեղծում: Որոշմամբ սահմանված՝ աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգի 1-ին կետի համաձայն «սեփականության իրավունքով հատկացվող բնակարաններից մեկ տարվա ընթացքում արված առաջարկություններից հրաժարվելու դեպքում քաղաքացիները կորցնում են տվյալ բնակարանը ստանալու իրենց իրավունքը»:

Երկրաշարժից հետո մի շարք անօթևանների ստացել են բնակարաններ, սակայն այնուհետև նրանք իրենց կամքով հրաժարվել են կամ դատական վճիռներով վտարվել են ստացած բնակարաններից: Իհարկե, այդ պարագայում բնակարաններից հրաժարված կամ զրկված ընտանիքները վերականգնվել են անօթևանների հերթացուցակում: Այստեղ էս ուզում եմ մեկ այլ երևույթի մասին խոսել: Եթե այդ բնակարանները տարբեր պատճառներով վերցվել են մի խումբ քաղաքացիներից, ապա պարզ տրամաբանությունը հուշում է, որ դրանք պետք է հատկացվեին այլ մի խումբ անօթևան քաղաքացիների, իսկ բնակարանից զրկված ընտանիքների անունները և հասցեները դուրս բերված լինեին երկրաշարժից հետո բնակարան ստացած անձանց ցուցակներից: Նորակառույց բնակարանների հասցեներն էլ այդ նույն ցուցակում պետք է նշված լինեին մեկից ավելի ընտանիքների անունների դիմաց: Սակայն մեր կողմից իրականացված՝ բնակբաշխման գործընթացի մոնիտորինգի ընթացքում բնակարանի հավակնորդ 300 անօթևանների գործեր ուսումնասիրելիս հայտնաբերվեցին 5 ընտանիքներ, ովքեր նախկինում ստացել, բայց այնուհետև հրաժարվել կամ զրկվել էին բնակարանից: Սակայն չգիտես ինչու նախկինում բնակարան ստացած անձանց ցուցակում այդ 5 բնակարանների հասցեներից միայն 1-ի դիմաց կար երկու ընտանիքի անուն-ազգանուն: Այսինքն, մեզ գոնե անհայտ է մնում, թե այն չորս բնակարանները, որոնք ստացվել և հետ են հանձնվել, հետագայում ինչ ճակատագրի էին արժանացել, արդյոք դրանք կրկին անօթևան ընտանիքների է են հատկացվել, թե ոչ...

Այժմ անդրադառնանք բնակարանների բաշխման ներկա՝ մեր դիտարկած գործընթացին: Նախ արդարության դեմ չմեղանչելու համար պիտի ասեմ, որ կազմակերպչական և օրինապաշտության առումով այն էականորեն տարբերվում էր նախորդ տարիների բնակբաշխումից, սակայն մի քանի կիրառվող բաղադրիչներ կան, որոնք մնում են անհասկանալի և կոռուպցիոն առումով ռիսկային: Օրինակ՝ բնակարանի հավակնորդ անօթևան ընտանիքների այն անդամները, ովքեր այլ պետությունների քաղաքացիներ են, հանձնաժողովի կողմից որպես շահառու չեն հաշվառվում և փաստորեն զրկվում են բնակարանի իրավունքից: Շատ դեպքերում բնակարանից զրկված այդ քաղաքացիները, ստանալով այլ երկրների քաղաքացիություն, պահպանել են նաև հայաստանյան գրանցումը: Հաշվի առնելով, որ Հայաստանում գործում է երկքաղաքացիության օրենքը, բնակբաշխման գործընթացում նման մեթոդի կիրառումը օրենսդրորեն մնում է անբացատրելի: Անշուշտ, այդ քաղաքացիները զրկվելով երկրաշարժին կորցրած բնակարանի դիմաց պետական փոխհատուցումից, Հայաստան վերադառնալիս կունենան բնակարանային խնդիր: Բնակարան ստանալու իրավունքից զրկվում են նաև այն քաղաքացիները, ովքեր իրենց անուններով ձեռք են բերել անշարժ գույք: Նման տեղեկատվություն հայթայթելու նպատակով բնակբաշխման հանձնաժողովը բնակարան ստանալու յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ հարցում է կատարում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակի մարզի և Երևան քաղաքի ստորաբաժանումներին: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբեմն միանման անուն-ազգանունների պատճառով շատ խեղճուկրակ վիճակում գտնվող անօթևաններ ընկնում են քաշքշուկի մեջ և ստիպված են լինում հակառակը՝ սեփականություն չունենալու փաստը ապացուցելու համար սեփական գրպանից ծախսեր անել ու անշարժ գույքի կադաստրից տեղեկանքներ բերել: Իհարկե, այստեղ ևս առկա է կոռուպցիոն ռիսկը, որովհետև չի բացառվում, որ մեկ ուրիշ դեպքում էլ կեղծ

տեղեկանքով հերքվի իրականում անշարժ գույք ունենալու փաստը: Բնակբաշխման այս փուլում բնակարան ստացած 500 ընտանիքների գործերի մեր կատարած ուսումնասիրությունների համաձայն՝ այդպիսի պատճառներով բնակարան ստանալու իրավունքից զրկվել է մոտ 200 անձ:

Առհասարակ, բնակարան ստանալու համար անօթևանից պահանջվող փաստաթղթերի քանակը բավական շատ է՝ շուրջ 20 անուն: Անօթևաններն այդ թղթաբարության համար չարչարանքներից ու ժամանակի վատնումից զատ ստիպված են լինում ծախսել 10-ից 15 հազար դրամ, իհարկե՝ եթե տարբեր ատյաններում նրանցից ավելին չշորթեն: Իսկ ինչպես ցույց է տալիս մեր իրականությունը, որտեղ առկա է թղթաբարությունը՝ այնտեղ մեծ է կոռուպցիոն ռիսկի հավանականությունը:

Բնակբաշխման ներկա գործընթացի որոշ ձգձգումն անմիջականորեն կապված էր նախորդ տարիներին աղետի գոտում տեղի ունեցած զանգվածային արտագաղթի հետ: Գյումրու անօթևանների հերթացուցակի 4200 ընտանիքներից գրեթե կեսը բնակարան ստանալու համար պահանջվող փաստաթղթերի փաթեթները չեն կարողանում ամբողջացնել: Հարյուրավոր անօթևան ընտանիքների մեկ կամ մի քանի անդամներ երկար ժամանակով բացակայում են Հայաստանից, նրանցից շատերի անձնագրերի վավերականության ժամկետը վաղուց լրացել է կամ ինչ-ինչ պատճառներով չեն կարող համապատասխան լիազորագրեր ուղարկել, ուստի ՀՀ կառավարության N 432 որոշմամբ պահանջվող փաստաթղթերը նրանք չեն կարողանում հայթայթել և ներկայացնել հանձնաժողով:

Փաստաթղթերի ձևավորման դժվարություն ունեցող մեկ այլ խումբ էլ գոյություն ունի: Դա էլ այն անօթևաններն են, ովքեր երկու կամ ավելի ընտանիքով գրանցված են նույն հասցեում: Այսինքն մեկ բնակարանին հավակնում են միաժամանակ մեկից ավելի ընտանիքներ և նրանց միջև չի կայանում փոխհամաձայնություն հասանելիք բնակարանի պատկանելիության առումով, համապատասխան փաստաթղթերի փաթեթը ձևավորելու և հանձնաժողով ներկայացնելու համար: Այսպիսի դեպքերում կրկին մեծ է կոռուպցիոն ռիսկի հավանականությունը, քանզի չի բացառվում կեղծ փաստաթղթերի կիրառումը կամ այս կամ այն քաղաքացու գործերում որևէ փաստաթղթի բացակայության հանդեպ իրավասու մարմնի ներկայացուցիչների կողմից ոչ պատահաբար աչք փակելու հնարավորությունը:

9.3 Վիճակահանություն

Այժմ կանդրադառնամ բնակբաշխման գործընթացի մեկ այլ բաղադրիչի՝ բնակարանների բաշխման նախավերջին՝ հասցեագրման փուլին, որը ներկայումս, ի տարբերություն նախորդ տարիների, ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգի համաձայն իրականացվում է հրապարակային վիճակահանությամբ:

Այդ փուլը կոռուպցիոն առումով ռիսկային է մի պարզ և միանգամայն հասկանալի պատճառով՝ յուրաքանչյուր ընտանիք էլ կնախընտրեր բնակվել իր համար ցանկալի՝ հիմնականում 2-րդ կամ 3-րդ հարկի հարավային պատուհաններով բնակարաններից որևէ մեկում:

Ահա թե ինչու աղետի գոտում անցած 20 տարիներին երբևէ իշխանությունները անօթևաններին բնակարանների բաշխումը չեն իրականացրել հրապարակային վիճակահանությամբ, քանի որ միշտ էլ հնարավոր է եղել գտնել քաղաքացիներ, ովքեր չեն զլացել «հատուկ վերաբերմունք» ցուցաբերել բնակարանների բաշխումն իրականացնողներին՝ իրենց ցանկալի շենքի ցանկալի հարկում, ցանկալի բնակարանը ստանալու համար:

Անշուշտ, հրապարակային և արդարացի վիճակահանությունը բացառում է կոռուպցիան բնակբաշխման այդ փուլում: Բարեբախտաբար ներկայումս այն իրականացվում է թափանցիկ, ինչը կարելի է համարել 2009-2010 թթ. բնակարանների բաշխման գործընթացի կարևորագույն ձեռքբերումներից մեկը: Նախորդ տարիների դառը փորձը հաշվի առնելով, մեր՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ-ն այս ծրագիրն իրականացնելիս իր ուշադրության կենտրոնում պահեց և փորձեց անել առավելագույնը, որպեսզի վիճակահանություններն ընթանան հրապարակային: Այդ նպատակով յուրաքանչյուր վիճակահանությունից առաջ տեղական հեռուստաընկերություններով հրապարակում էինք մասնակիցների ցուցակները, բոլորինը անուն առ անուն՝ ժամանակավոր բնակության հասցեներով հանդերձ, ինչպես նաև նրանցից յուրաքանչյուրին հեռախոսազանգով հրավիրում էինք մասնակցելու վիճակահանությանն ու անձամբ որոշելու ապագա բնակարանի հասցեն:

Անգամ այսպիսի հրապարակայնության և հսկողության պայմաններում աղետի գոտու անօթևանների շրջանում առկա են մտահոգություններ: Վիճակահանություններից մեկի նախօրեին նախորդ վիճակահանությանը մասնակցած քաղաքացիներից մեկն այցելեց մեր գրասենյակ և կասկած հայտնեց, թե վիճակահանության դրվում են միայն չորրորդ հարկերի բնակարանները: Այսինքն, նրանց անհանգստության տրամաբանությունը հուշում էր, թե ոչ բոլոր բնակարաններն են վիճակահանությամբ բաժանվում, հատկապես՝ բոլորի համար ցանկալի 2-րդ և 3-րդ հարկերինը: Ասվածից կարելի էր գալ միայն մի եզրակացության, թե բնակարանների բաշխման վիճակահանության հանձնաժողովը, հանցավոր համաձայնության գալով բնակարան ստանալու հավակնորդ որոշ քաղաքացիների հետ, նրանց առանց վիճակահանությանը մասնակցելու հատկացնում է նախընտրած բնակարանները:

Սա մեզ, անշուշտ, չէր կարող չմտահոգել: Թեև մենք մի փոքր կասկածանքով մոտեցանք այդ մտավախության իսկությանը, սակայն որոշեցինք հենց առաջիկա վիճակահանությունը ենթարկել մանրազնին դիտարկման: Նշենք, որ բնակարանների բաշխման վիճակահանությունն անցկացնում էր ՀՀ քաղաքաշինության նախարարի հատուկ հրամանագրով ձևավորված հանձնաժողովը, որում ընդգրկված են նաև Շիրակի մարզպետը, Գյումրու քաղաքապետը և մարզից ընտրված պատգամավորներ:

Ապրիլի 16-ին կայացած՝ բնակբաշխման այս փուլի թվով 3-րդ վիճակահանության դիտարկումները պարզապես ժխտեցին ստացված «ահագանգի» իսկությունը: Գյումրու դրամատիկական թատրոնի դահլիճում, որտեղ բազմաթիվ լրատվամիջոցների ներկայությամբ անցկացվեց վիճակահանությունը, 192 բնակարան էր վիճակահանվելու, սակայն ներկա էին գրեթե կրկնակի թվով քաղաքացիներ: Ավելին, բնակարանների բաշխման հանձնաժողովի որոշմամբ թեև թույլատրվել էր հաշմանդամ ունեցող ընտանիքների համար անցկացնել 1-ին հարկերի համար առանձին՝ արտոնյալ պայմաններում վիճակահանություն, սակայն

այդ ընտանիքների գերակշիռ մասը պարզապես հրաժարվեցին իրենց հանդեպ ցուցաբերված առանձնակի վերաբերմունքից և ցանկություն հայտնեցին մասնակցել ընդհանուր հիմունքներով: Իսկ ինչ-ինչ պատճառներով բացակա բնակարան ստացող ընտանիքների փոխարեն բնակարանների հասցեներով թերթիկները պտտվող թափանցիկ տուփից հանեցին դահլիճից պատահականորեն ընտրված քաղաքացիները, հիմնականում երեխաներ: Տուփից դուրս եկած յուրաքանչյուր հասցեն տեղում արձանագրվում էր բնակարան ստացող համապատասխան անձի անուն - ազգանունի դիմաց:

Իհարկե, առկա դրականը ներկայացնելով հանդերձ, մենք հեռու ենք այն մտքից, թե բնակարանների բաշխման գործընթացն ընթանում է իդեալական պայմաններում: Քավ լիցի, չենք էլ ուզում պնդել, թե զեղծարարությունները բացառվելու են հաջորդ վիճակահանություններում:

22 տարի շարունակ ծայրահեղ ծանր պայմաններում ապրող մեր անօթևան հայրենակիցներն իրենց մաշկի վրա են զգացել ու շարունակում են զգալ բազում անարդարություններ, ինչի պատճառով լի են կասկածանքով և վախով, կասկածում են բոլորին ու ամեն ինչում, ինչպես ասում են՝ աչքը տեսածից է վախենում:

Այստեղ ուզում ենք հատուկ նշել, որ հասարակությունից վախն ու կասկածանքը դուրս հանելու հարցում զգալի դեր ունեն նաև քաղաքացիական հասարակության կառույցները, իսկ իշխանությունների կողմից իրականացվող պետական ու տարածքային ծրագրերում հասարակական մասնակցության և առավելագույն հրապարակայնության ապահովումը կարևորագույն նախապայման է կոռուպցիայի եթե ոչ ամբողջովին բացառման, ապա գոնե նվազեցման համար:

9. 4 Տարածքների ազատումը ժամանակավոր կացարաններից

1988 թ.-ի երկրաշարժից մի քանի տարի անց, երբ հայտնի դարձավ, որ աղետի գոտին երկու տարում վերականգնելու խորհրդային իշխանությունների խոստումները իրականության հետ որևէ առնչություն չունեն, շատերին սկսեց հուզել այն հարցը, թե այնուամենայնիվ երբ է Գյումրին վերականգնվելու և ազատվելու տնակներից: Առավել խոհեմ ու տարեց մարդիկ դեռևս այդ տարիներին էին պնդում, որ քաղաքի վերականգնման և ժամանակավոր կացարաններից ազատման համար տասնամյակներ կպահանջվեն: Նրանք անշուշտ նման մտավախության հիմքեր ունեին, քանզի նրանց հիշողություններում պահապանված էին 1926 թ.-ին Լենինականում տեղի ունեցած երկրաշարժն ու դրա թողած հետևանքները: Ի դեպ, 1926 թ.-ի երկրաշարժից հետո անօթևաններին բնակեցնելու նպատակով կառուցված ժամանակավոր կացարանների մի մասը մինչև օրս էլ բնակելի են: Գյումրիում նույնիսկ այդ կացարանների անվանումով՝ «բարաքների» թաղամաս գոյություն ունի:

Գյումրիում այսօր տնակներն իրենց թվաքանակով գերազանցում են երկրաշարժից բնակարան կորցրած և մինչև օրս պետության կողմից չփոխհատուցված անօթևան ընտանիքների քանակը: Որովհետև ժամանակավոր կացարաններում բնակվում են նաև հարյուրավոր այնպիսի ընտանիքներ, որոնց հանդեպ պետությունը բնակարանով ապահովելու պարտավորություն չի ստանձնել: Դրանք հիմնականում այն ընտանիքներն են, որոնք երկրաշարժին բնակարան չեն կորցրել կամ նախկինում մեկ անգամ արդեն բնակարաններ ստացել են:

Գյումրու տնակային ավաններում բնակվող քաղաքացիներին ըստ իրենց անօթևանության կարգավիճակի պայմանականորեն կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի: Առաջին. ընտանիքներ, ովքեր դեռևս բնակարան չեն ստացել կամ նախկինում փոխհատուցվել են մասնակի՝ երկրաշարժին կորցրած սենյակների թվից պակաս: Երկրորդ. ընտանիքներ, ովքեր ստացել են ԲԳՎ-ներ, սակայն բնակարաններ չեն գնել կամ ստացած բնակարանները վաճառել են: Երրորդ. բազմանդամ ընտանիքներ, որոնց մի մասն է միայն տեղափոխվել ստացած, հիմնականում մեկ կամ երկու սենյականոց բնակարանները: Չորրորդ. ընտանիքներ, ովքեր երկրաշարժից բնակարան չեն կորցրել, սակայն անօթևան են: Վերջիններիս թվում են նաև այնպիսի ընտանիքներ, ովքեր այլ մարզերից են աղետի գոտի տեղափոխվել և բնակվում են տնակներում: Այս իրականությունը ի նկատի ունենալով առանց վարանելու կարելի է ասել, որ մոտակա տասնամյակում աղետի գոտում սուր է դրված լինելու անօթևանության խնդիրը: Գյումրիում էլի մնալու են տնակային ավաններ, եթե նույնիսկ ՀՀ իշխանությունները մինչև 2013 թվականը 3300 բնակարան կառուցելու իրենց խոստումն ի կատար ածեն:

Բավական ուշագրավ և ուսումնասիրման արժանի է նաև տնակային ավանների քարտեզագրման ու հաշվառման հարցը: Որ Գյումրիում տնակային ավանների ընդամենը 1-2 քարտեզ գոյություն ունեն, այն էլ միայն քաղաքապետարանի համապատասխան բաժնում, մենք պարզեցինք տակավին վերջերս, երբ սկսեցինք իրականացնել բնակարանների բաշխման մոնիտորինգի ծրագիրը: Իսկ Գյումրու տարածքում և նրա սահմաններից դուրս սփռված տնակային ավանների ու տնակների հասցեներն իրենցից այնպիսի թվային կողավորում են նեկայացնում, որ առանց քարտեզների պարզապես անհնար է հայտնաբերել որևէ տնակային ավան, առավել ևս՝ տնակ: Տնակների հասցեները կոտորակով բաժանված երկու եռանիշ թվերից են բաղկացած. առաջինը տնակային ավանի համարն է, երկրորդը՝ ժամանակավոր կացարանի: Տնակային ավանների հասցեները սկսվում են 101-ով և վերջանում 237-ով, այսինքն գոյություն ունեն 100-ից ավելի փոքր ու մեծ տնակային ավաններ: Եթե չեմ սխալվում, երկրաշարժից մինչև օրս առնվազն երեք անգամ իրականացվել է տնակների հաշվառում և ամեն անգամ փոխվել են համարները: Այդ է վկայում նաև ներկայումս տնակների պատերին գրված և կրկին վերահաշվառողների կողմից ջնջված թվերի առկայությունը: Ի դեպ, ժամանակավոր կացարաններում բնակվող բոլոր քաղաքացիների անձնագրերում ևս որպես հասցե միայն այդ թվերն են գրված:

Ասեմ, որ մեր կողմից իրականացվող բնակբաշխման գործընթացի մոնիտորինգի ծրագրի շրջանակներում տնակային ավանների քարտեզը տպագրվեց և տարածվեց, ինչպես նաև պատրաստվեց այդ քարտեզի էլեկտրոնային տարբերակը, որը տեղադրված է մեր՝ www.shirakcentre.org վեբ կայքում:

Այստեղ ուզում եմ թեմայից մի փոքր շեղվելով՝ ոչ պակաս ուշագրավ մի փաստի մասին ևս խոսել: Ընտրությունների ժամանակ թեկնածուների վստահված անձինք, դիտորդները և ընտրական հանձնաժողովի անդամները մշտապես բարդ խնդրի առաջ են կանգնում տնակային ավանների քարտեզների բացակայության պատճառով: Քվեարկությունների ժամանակ գրեթե անհնարին է պարզելը, թե տնակի գրանցում ունեցող ընտրողը որ տեղամասի բնակիչ է: Ու՛վ գիտե, գուցե տնակային ավանների քարտեզները գրեթե գաղտնի են պահվել հենց կրկնակի քվեարկությունները չկանխելու և չբացահայտելու նպատակով: Ինչնիցե...

Անցած տարիներին տեղական իշխանությունները քաղաքի կենտրոնական տարածքներն օտարելու նպատակով այդ տարածքները տնակներից ազատելու բուռն գործընթաց իրականացրին: Ժամանակավոր կացարաններից տեղահանված հարյուրավոր անօթևան ընտանիքների մի մասի հետ նույնիսկ կնքվեցին պայմանագրեր՝ բնակարանների վարձակալության գումարները երկու տարով տեղական բյուջեից վճարելու վերաբերյալ: Առաջին հայացքից, քաղաքը պատշաճ տեսքի բերելու առումով, արվածը ողջունելի էր, սակայն միթե հնարավոր չէր սպասել և այդ տարածքները չնչին գնով մանր-մունր խանութներ կառուցելու համար վաճառելու փոխարեն տրամադրել բազմաբնակարան շենքեր կառուցելու: Նման մոտեցմամբ Գյումրին իրոք կվերագտներ հանրապետության երկրորդ քաղաքին հարիր իր երբեմնի տեսքն ու հմայքը: Իսկ ավելի քան երկու տասնամյակ անօթևանի կարգավիճակում հայտնված ընտանիքները, քաղաքի կենտրոնական մասում կառուցված շենքերից բնակարաններ ստանալով, ինչ-որ չափով իրենց սփոփված կզգային կրած զրկանքների համար: Իհարկե, ժամանակավոր կացարաններում բնակվող ոչ բոլոր անօթևաններն են, այսպես ասած, «անճարակ»: Մի շարք անօթևանների այնուամենայնիվ հաջողվել է սեփականաշնորհել իրենց տնակների տարածքները: Հենց նրանցից շատերն են, որ չեն շտապում մասնակցել բնակբաշխման ներկայիս գործընթացին և խուսափում են բնակվել Գյումրու ծայրամասում կառուցված Մուշ-2 թաղամասում:

Երբեմն էլ բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքները տարբեր շարժառիթներով թաքցնում են տնակ կամ տնակներ ունենալու փաստը: Հիմնականում դա արվում է տնակը քարապատելու և տարածքի հետ միասին որպես ինքնակամ կառույց սեփականաշնորհելու նպատակով: Անշուշտ, այդ գործընթացը կատարում են պետությունից բնակարան ստանալուց հետո միայն, քանի որ ըստ ՀՀ կառավարության համապատասխան որոշման՝ սեփականության իրավունքով անշարժ գույք տնօրինող անօթևանը պետության կողմից բնակարանային փոխհատուցման ենթակա չէ: Տվյալ պարագայում խոսքը ոչ թե քաղաքացիների երկու բնակարան ունենալու-չունենալու, այլ փաստերը թաքցնելու մասին է, ինչն առանց պատկան մարմինների գիտության և նրանց կողմից անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման անհնար է: Իսկ որ դրանում առկա է կոռուպցիոն ռիսկը՝ կարծում եմ պարզ է:

Ընթացիկ տարվա հուլիս-օգոստոս ամիսներին 1056 բնակարան ստացած ընտանիքներ տեղափոխվելու են բնակվելու նորակառույց բնակարաններում: Հենց այդ ժամանակ էլ ինչպես իրենց տնակների տարածքները սեփականաշնորհած կամ ապօրինի բնակելիներ տնօրինող, այնպես էլ բազմանդամ ընտանիքները, ինչու ոչ՝ նաև բնակբաշխման հանձնաժողովն ու իշխանությունները, կանգնելու են տարածքները տնակներից ազատելու դժվարին և կոռուպցիոն ռիսկերով լի խնդրի առաջ:

Իսկ որ Գյումրին տնակներից ազատելու խնդիրը կարևորում են ոչ միայն տեղական իշխանությունները, դա միանշանակ է: Թերևս դրա վառ ապացույցն է նաև այն, որ աղետի գոտում քաղաքացիներին բնակարաններ հատկացնելու կարգը սահմանող ՀՀ կառավարության որոշումներում բնակարան ստացած քաղաքացիների կողմից ոչ հիմնական կառույցների ազատման մասին նույնիսկ մի քանի կետ կա: Ներկայացնեմ դրանցից երկուսը.

- բնակարան ստացող քաղաքացին և նրա ընտանիքի բոլոր չափահաս անդամները պարտավոր են տալ գրավոր պարտավորություն հատկացված բնակելի

տարածությունում բնակեցումից հետո պետական ժամանակավոր կացարանը տասն օրվա ընթացքում իրենց կողմից ազատելու կամ իրենց պատկանող ժամանակավոր կացարանը քանդելու և հողամասն ազատելու մասին: Նման պարտավորություն ստանձնած քաղաքացու ստորագրությունը վավերացնում է համայնքի ղեկավարը (ՀՀ կառավարության N 432 որոշում),

- կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացումից հետո մեկամսյա ժամկետում՝ բնակարան ստացող քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների կողմից բնակությունից ազատված ոչ հիմնական շինությունները ենթակա են քանդման՝ կառուցապատողի կամ համապատասխան համայնքի ղեկավարի կողմից (ՀՀ կառավարության N 1402-Ն որոշում):

Ըստ վերոհիշյալ որոշումների նույնիսկ անօթևան ընտանիքի բնակելի տարածություն ստանալու հերթականությունը կարող է փոխադրվել ավելի ուշ ժամկետների, եթե վերջինս հրաժարվում է հանձնել պետական սեփականություն հանդիսացող ժամանակավոր կացարանը (տնակը) կամ հրաժարվել է քանդել իրեն պատկանող ժամանակավոր կացարանը:

ՀՀ կառավարության որոշումներից արված մեջբերումներն ուշադիր ընթերցելիս ակնհայտ է դառնում ևս մի ուշագրավ փաստ: ՀՀ կառավարության N 432 որոշման մեջ 2009 թ-ին, մեկ այլ՝ N 1402-Ն որոշմամբ ավելացվել է. « շինությունները ենթակա են քանդման՝ կառուցապատողի կողմից...» արտահայտությունը: Կարծում եմ՝ սա արվել է ոչ պատահաբար, եթե հաշվի առնենք, որ տվյալ պարագայում կառուցապատողը «Գլենդել Նիլզոն» է: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն հենց այս կազմակերպությանն էլ տրվելու է բնակարան ստացած ընտանիքներին տարածքները ժամանակավոր կացարաններից ազատված լինելու փաստի մասին տեղեկանքներ տրամադրելու իրավասությունը: Հաշվի առնելով այն, որ նախկինում այդ լիազորությունը պատկանում էր ՏԻՄ-երին, կարելի է ասել, որ կառուցապատողին աղետի գոտում վերապահվելու է գրեթե ՏԻՄ-ի լիազորություն:

Ինչնիցե, գուցե բարին էլ հենց դա է, քանզի չես ասի, որ ՏԻՄ-երը նախկինում ավելի արդարացի մոտեցում են ցուցաբերել տարածքները տնակներից ազատելու գործում:

Այդ ոչ հիմնական շինությունները կամ տնակները, անկախ իրենց տարիքից, որպես շինանյութ բավականին արժեք ունեն՝ 200 հազարից մինչև 1 մլն դրամ: Ասենք, որ բնակարան ստացած անօթևաններից ժամանակավոր կացարանները գնելու, դրանք քանդելու և որպես շինանյութ վաճառելու բիզնեսը լայն թափ առավ հատկապես աղետի գոտում Լինսի հիմնադրամի կողմից բնակարանային շինարարության տարիներին: Նման աշխատանքով սկսեցին զբաղվել գործազուրկների տասնյակ խմբեր: Իրենց հերթին բնակարան ստացած ընտանիքները ժամանակավոր կացարանների վաճառքից գոյացած գումարներն օգտագործում էին նոր բնակարաններ տեղափոխվելու ծախսերը հոգալու և բնակարաններն ինչ-որ չափով կահավորելու նպատակով:

Տարիներ առաջ, հատկապես ԲԳՎ ծրագրով անօթևանների բնակարանային հիմնախնդիրը լուծելու ժամանակ, անօթևաններից ժամանակավոր կացարանները տեղական և տարածքային իշխանությունները վերցնում էին չնչին՝ 10-20 000 դրամ արժեքով: Իսկ պետական բյուջեից հսկայական գումարներ էին տրամադրվում տարածքները տնակներից ազատելու աշխատանքներ կատարելու համար այն դեպքում, երբ ժամանակավոր կացարանների շինանյութի և տնակների վաճառքից գոյանում էին զգալի ֆինանսական միջոցներ: Հենց այդ տարիներին սկսեցին

հանրապետությունով մեկ, և հատկապես Սևանա լճի ափամերձ տարածքներում ի հայտ գալ աղետի գոտուց տեղափոխված հարյուրավոր տնակներ:

Վերջաբան

Իհարկե, յուրաքանչյուր նման հսկայածավալ պետական միջոցառում, այդ թվում նաև բնակբաշխման գործընթացը, լի է կոռուպցիոն ռիսկերով ու բացերով: Սակայն պատշաճ վերահսկողության և բնակբաշխման հանձնաժողովի օրինապահ աշխատանքի պարագայում միանգամայն հնարավոր է խուսափել սխալներից: Հենց կառավարության ու քաղաքացիական հասարակության կառույցների խնդիրն է անհրաժեշտ վերահսկողությամբ և մասնակցությամբ ապահովել առավելագույն հրապարակայնություն կոռուպցիոն ռիսկերի հնարավորինս կրճատման համար, ինչը տվյալ պարագայում անօթևան ընտանիքների համար առանց չափազանցության կյանքի արժեք ունի:

Վերջում մի բան էլ եմ ուզում նշել հատուկ նրանց համար, ովքեր պարզապես ի վիճակի չեն զերծ մնալ անգամ աղետյալների հաշվին հարստանալու գայթակղությունից: Եթե կոռուպցիան վտանգավոր է, քանզի համարվում է պետության հիմքերը խարխլող երևույթ, ապա տվյալ պարագայում՝ 22 տարի շարունակ գլխի վերև առանց ծածկի և երկրաշարժից առանց այդ էլ ահավոր վիշտ ու բազում զրկանքներ կրած ընտանիքներին կոռուպցիայի մեջ ներքաշելը այլ կերպ, քան սրբապղծություն համարել հնարավոր չէ: Ի դեպ, նույնը կարելի է ասել անօթևանի փոխարեն ոչ կարիքավորի կողմից բնակարան ստանալու պարագայում: Մենք մեր գործունեությամբ և մասնավորապես այս ծրագրի իրականացմամբ հենց նման երևույթների կանխմանը հասնելուն էլ նպատակադրվել ենք: Ու եթե մեզ հաջողվի մեր նպաստը բերել աղետի գոտում ամենահուզող խնդրի՝ բնակարանների բաշխման գործընացում օրինականության և արդարության ապահովմանը, ապա կհամարենք, որ մեզ այնուամենայնիվ ինչ-որ բան հաջողվեց անել:

Ավարտելով բնակբաշխման գործընթացի չորս հիմնական փուլերում կոռուպցիոն ռիսկերի ու բացերի մասին հրապարակումների շարքը, վերջում ուզում եմ անդրադառնալ նաև այն գրելու բուն դրդապատճառին: Առհասարակ՝ որ կոռուպցիան Հայաստանում հասել է գերվտանգավոր չափերի՝ կլանելով գրեթե առանց բացառության մեր կյանքի բոլոր ոլորտները, միանշանակ է: Ինքս կարծում եմ, որ կոռուպցիան եթե ոչ ամբողջովին արմատախիլ անելու, ապա գոնե դրա նվազեցման համար պայքարի լավագույն ձևերից մեկը կանխարգելիչ մեթոդների կիրառումն է: Հենց այդ նպատակին էլ կցանկանայինք, որ ծառայեին ինչպես մեր կողմից իրականացվող մոնիտորինգի ծրագրերը, այնպես էլ այս հրապարակումները:

Վահան Թումայան

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ

10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

10. 1 ՀՀ քաղաքաշինության նախարարության տեղեկանք-2009 թ.

Երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակապահովմանն ուղղված միջոցառումների մասին

1. 2001 թվականին ընդունված ՀՀ օրենքով հաստատված աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրով պետական պարտավորություններ ձեւավորվեցին ՀՀ Շիրակի, Լոռու, Արագածոտնի եւ Տավուշի մարզերի բնակավայրերում բնակարանային խնդիրների լուծման կարիք ունեցող 14920 ընտանիքների նկատմամբ:

Ձեւավորված պարտավորությունների դիմաց 2001-2008 թթ. ընթացքում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված ծրագրերի շնորհիվ 14920 ընտանիքներից 13347-ը բարելավել են իրենց բնակարանային պայմանները, այդ թվում ի հաշիվ`

- պետական միջոցների - 2 282 ընտանիք
- ԱՄՆ կառավարության (USAID) - 6 596 ընտանիք
- «Լինսի» հիմնադրամի - 4 126 ընտանիք
- «Հայաստան» համահայկական հիմնադրամի - 28 ընտանիք
- Ջոն եւ Կարեն Հանթսմանի հիմնադրամի - 64 ընտանիք
- համայնքային միջոցների - 251 ընտանիք

2. Երկրաշարժից հետո 20 տարի անց դեռեւս անօթեւանի կարգավիճակում գտնվող անձանց բնակարանային խնդիրների լուծման հետ կապված հարցերը կարգավորվել են ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի նիստի N 23 որոշմամբ հավանության արժանացած հայեցակարգով:

Հայեցակարգի դրույթների համաձայն մինչեւ 2013 թվականը նախատեսվում է լուծել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների վերահաշվառման գործընթացի արդյունքներով հաստատված ցուցակների համաձայն 6930 ընտանիքների բնակարանային խնդիրները, այդ թվում`

- քաղաքային բնակավայրերում – 4 754, *որոնցից Գյումրիում՝ 3996*
- գյուղական բնակավայրերում – 2 176

3. Հայեցակարգով սահմանված բնակապահովման ուղղությունների համաձայն մինչեւ 2013 թվականը 6930 անօթեւան ընտանիքների բնակարանային խնդիրները նախատեսվում է լուծել`

- բնակարանների գնման վկայագրերի միջոցով -1308 ընտանիքների, *որոնցից Գյումրի քաղաքում* - 996 ընտանիքների
- շինարարության ծրագրերի միջոցով - 5622 ընտանիքների, *որոնցից Գյումրի քաղաքում* - 3000 ընտանիքների

4. ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող ԲԳՎ (2860.0 մլն.դրամ) եւ բնակարանային շինարարության (770.0 մլն.դրամ) ծրագրերի շրջանակներում նախատեսվում է երկրաշարժի

հետեւանքով անօթեւան մնացած 723 ընտանիքների հնարավորություն ընձեռել հոգալու իրենց բնակարանային խնդիրները:

I. ԲԳՎ ծրագրի շրջանակներում - 515 ընտանիքների, որոնցից՝

1. Բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած – 289 ընտանիքների, *այդ թվում՝*

- ք.Գյումրի - 212
- ք.Մարալիկ - 3
- ք.Վանաձոր - 55
- ք.Ստեփանավան - 5
- գ.Գուգարք - 7
- ք.Դիլիջան - 7

2. ՀՀ Շիրակի, Լոռու եւ Արագածոտնի մարզերի գյուղական բնակավայրերում (10 եւ պակաս անօթեւան ընտանիքներ ունեցող համայնքներ) անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած 226 ընտանիքների,

այդ թվում՝

- ՀՀ Շիրակի մարզ (31 համայնք) - 110
- ՀՀ Լոռու մարզ (10 համայնք) - 47
- ՀՀ Արագածոտնի մարզ (16 համայնք) - 69

II. Բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում – 208 ընտանիքների

- ք. Ստեփանավան (380.0 մլն. դրամ հատկացումների հաշվին Դեսինի փող. թիվ 45 եւ 47, Պրումեթեւս փողոցի թիվ 28 եւ 49 անավարտ շենքերի կառուցում) - 48
- գ.Ծաղկահովիտ (240.0 մլն.դրամ հատկացումների հաշվին գյուղի N5 բազմաբնակարան շենքի վերականգնում) - 50

ք.Մարալիկ (150.0 մլն.դրամ հատկացումների հաշվին 9 անավարտ շենքերի կառուցում՝ մեկ անձից բաղկացած անօթեւան ընտանիքների համար) -110

10.2 Հատվածներ մամուլում հրապարակված նյութերից

07.12.2009թ. Tert.am

Եվս մեկ դեկտեմբերի 7. Ժամանակավոր ադետ 21 տարի տևողությամբ

«Ես երկրին էս ի՞նչ ա եղել, էկել եք ասեք՝ տուն ստանանք», – մոտավորապես այսպես, զարմացած են դիմավորել Գյումրիի տնակային ավաններից մեկի բնակիչները «Շիրակ Կենտրոն» հ/կ–ի ներկայացուցիչ Վահան Թումասյանին, ով, անօթևանների ցուցակում հայտնված մարդկանց տնակներով շրջելով, ապացուցում էր, որ եկել է նրանց տուն ստանալու ժամանակը:

1988-ի երկրաշարժից աղետի գոտու վերածված շրջանները 21 տարվա ընթացքում այդպես էլ չդարձան, ինչպես ժամանակին խոստանում էին երկրի բարձրաստիճան ղեկավարները, զարգացման գոտի:

Այսօր երկրի նախագահն ու վարչապետը, այցելելով Գյումրի և Սպիտակ, եզրափակվեցին ծաղկեպսակներ դնելով զոհերի հիշատակին:

«Ճիշտ էլ արել են, որ չեն խոսացել: Խոսալու բան չկա: Դեմն էլ ընտրություն չի սպասվում: Խոստացածն էլ կատարեն՝ հերիք ա», - խոստովանեց Գյումրիի բնակիչ, մոտ 45 տարեկան տղամարդ, ով չցանկացավ ներկայանալ:

«Ի՞նչ «զարգացման գոտի»: Հայաստանում տենց բան չկա: Երևանից երկու քայլ ես անում, սաղ աղետի գոտի ա», - շարունակում է գյումրեցին:

Ընդհանրապես քաղաքի բնակիչներն առանձնահատուկ ուշադրության չեն արժանացնում «առիթներով» այցելող լրագրողներին. ջերմ են, պատրաստ են օգնել ամեն հարցով, սակայն խուսափում են տեսախցիկից, ձայնագրիչից, հարցազրույցներից և գերադասում են անանուն մնալ: Լրագրողն իրենց համար արդեն վաղուց «հարց լուծող չի»:

«Կոպալով գլուխդ կջարդեն», - շտապեց հայիոյել մեզ մի տաստիկ քաղաքի կենտրոնական հրապարակում և անմիջապես ներողություն խնդրեց՝ նկատելով, որ իրեն չենք պատրաստվում լուսանկարել:

Երկրի ղեկավարության արարողակարգային այցի ընթացքի մասին գյումրեցիները նույնիսկ տեղյակ չէին: Գիտեին, որ «գալու են կամ արդեն եկել են»: Եկեղեցիները պատարագ էին մատուցում, քաղաքի կենտրոնում երեկոյան մոմավառություն պետք է կազմակերպվեր, շարքային մարդիկ այցելում էին անվերջ թվացող գերեզմանատներ:

Բոլոր «ժամանակավորների» վառարանների խողովակներից ծուխ է գալիս: Տեղ-տեղ տնակների մոտ մարդկանց բազմություն է նկատվում: Նրանք հավաքվել են հանգուցյալներին հիշելու և «ժուռնալիստների հավեսը չունեն»: Լրագրողի անձը հետաքրքրություն էր առաջացնում փողոցում վազվզող և դեկտեմբերյան Գյումրիի համար շատ թեթև հագնված երեխաների մոտ միայն:

Ի տարբերություն մեծահասակների, նրանց համար «ժամանակավոր կացարան» բառակապակցությունն իմաստ չունի: Ծնված օրվանից կացարանը երեխաների համար մշտական և հարազատ տունն է:

16.12.2009 «Առավոտ» օրաթերթ

ԱՆՕԹԵՎԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՄՆԱՑԵԼ ԵՆ ԱՆՃԱՐՆԵՐԸ

Այս մասին են փաստում Գյումրիում կատարված ուսումնասիրությունները

Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանի և Շիրակի նախկին մարզպետ Ռոմիկ Մանուկյանի ծեծկոտուքից հետո, կառավարությունը 2008 թ. նոյեմբերին որոշեց աղետի գոտում անձամբ իրականացնել բնակբաշխման գործընթացը: Այդ պարտականությունը դրվեց քաղաքաշինության ԲՀԿ-ական նախարար Վարդան Վարդանյանի վրա: Գյումրիի քաղաքապետը մարզպետարանի բնակբաշխման հանձնաժողովին մեղադրում էր կաշառակերության մեջ՝ հրապարակավ հայտարարելով, որ անօթեւան գյումրեցին «Լինսիի» շենքերից բնակարան ստանալու համար ստիպված է եղել վաճառել անգամ ոսկե ատամները: Արդյո՞ք

կոռուպցիոն ռիսկերը բացառված են քաղաքաշինության նախարարության բնակքաշխման հանձնաժողովի աշխատանքում, երեկ լրագրողները այսպիսի հարց ուղղեցին հասարակական հիմունքներով տվյալ հանձնաժողովում ընդգրկված «Շիրակ կենտրոն» հ/կ-ի ղեկավար Վահան Թումասյանին: Նա երեկ Գյումրիի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում ասուլիս էր հրավիրել՝ հայտնելու, որ իր կազմակերպությունը բնակքաշխման գործընթացը թափանցիկ դարձնելու ու բնակարանները հասցեատերերին՝ իրական անօթեւաններին հասցնելու նպատակով Բաց հասարակության ինստիտուտի աջակցությամբ մոնիտորինգ է անցկացնում: «Սա կարելի է նաեւ հակակոռուպցիոն կամ կոռուպցիոն ռիսկերի կրճատման ծրագիր անվանել, բնակարանների բաշխման գործընթացում երբեք չի եղել դեպք, որ այն ընթանա հասարակական հատվածի մասնակցությամբ, այլընտրանքով: Չեմ ուզում խախտել անմեղության կանխավարկածը ու ասել, թե իշխանություններն ամեն ինչ արել են բնակքաշխումը կոռուպցիայի, փող աշխատելու վերածելու համար, բայց բոլորս էլ գիտենք, ակնհայտ է, որ Գյումրիի բնակքաշխման գործընթացում թերացումներ, օրինախախտումներ են տեղ գտել: Հիմա մենք մասնակցում ենք նպատակ հետապնդելով, որ նման դեպքերը տեղ չգտնեն:

Ես հակված եմ մտածելու, որ նման դեպքեր չեն լինի, հավատացեք, որ մենք ավելի քիչ անօթեւաններ կունենայինք, եթե մինչ օրս բնակարանների բաշխման գործընթացը գոնե կիսով չափ թափանցիկ ընթանար», - ասաց Վահան Թումասյանը՝ անտեղյակ լինելով, որ քաղաքաշինության բնակքաշխման հանձնաժողովը եւս փակ է աշխատում եւ լրագրողներին իր նիստերի մասին բացարձակապես տեղյակ չի պահում:

Կոռուպցիայի թեմայից դուրս բանախոսը նաեւ տեղեկացրեց, որ բնակարան ստանալու նպատակով հանձնաժողովին դիմել են անօթեւանների ընդամենը 60%-ը, իսկ 40%-ը տարբեր պատճառներով չի ներկայացել: Հետեւաբար, նրա կազմակերպությունը սկսել է տնետուն ընկնել ու ուսումնասիրել պատճառները: «Հիմնական պատճառները բաժանում ենք 4 մասի, առաջինը փաստաթղթերի բացակայությունն է, գիտեք, որ հսկա փաստաթղթերի կույտ է պահանջվում, շատ ընտանիքներ տարբեր պատճառներով չեն կարողանում պարզապես էդ փաստաթղթերը ներկայացնել, օրինակ, մտանք մի տնակ, որտեղ 10 անդամներից բաղկացած ընտանիքից մնացել էր միայն մայրը, մյուսները բացակայում էին Հայաստանից: Նրանք պետք է համապատասխան լիազորագրեր ներկայացնեն, փաստորեն՝ փաստաթղթերը ամբողջական չեն ու նրանք այս փուլում դուրս են մնում բնակարան ստանալու իրավունքից: Երկրորդ պատճառն այն է, որ քսան տարի է անցել երկրաշարժից, բնականաբար ընտանիքը բազմացել է, զավակները մեծացել ու ամուսնացել են, տարբեր ընտանիքներ են կազմել, բայց նրանք հաշվառված են մի բնակարանի վրա, այսինքն՝ ստացվում է, որ 3 կամ 4 ընտանիք ստանալու է մի բնակարան, եւ փաստաթղթերը չներկայացնելու պատճառն անհամաձայնությունն է, թե տվյալ բնակարանը ում է պատկանելու: Հաջորդ պատճառը անիրազեկությունն է, մարդիկ պարզապես չգիտեն, որ իրենց հերթը հասել է, 2008 թ.-ին վերջին փոփոխությունները որ արվել են, նրանք ավելի պակաս արտոնություններ են ունեցել, բայց դրանք ավելացել են ու իրենք տեղյակ չեն, որ անօթեւանների ցուցակում առաջին 100 կամ 200-ի մեջ են: Իսկ 4-րդ խումբը մարդիկ են, որոնք չեն ուզում քաղաքի ծայրամասում կառուցվող Մուշ թաղամասից բնակարան ստանալ, նրանք պատճառաբանում են, որ իրենց ժամանակավոր կացարանները տեղադրված են կենտրոնական մասում: Բհարկե, լավ կլիներ, եթե

Ժամանակին քաղաքի կենտրոնական մասը չօտարվեր եւ պահվեր բնակելի շենքեր կառուցելու նպատակով, գոնե մի մասը: Հետագայում եւս պետք է տարածքներ հայթայթել ու բնակարանաշինությունը տեղափոխել քաղաքի կենտրոնական մաս», - կարծիք հայտնեց բանախոսը:

«Առավոտը» հետաքրքրվեց, թե Վահան Թումասյանը կիսո՞ւմ է, արդյոք, մյուս հ/կ-ներից հնչող այն կարծիքը, որ Գյումրիի անօթեւանների ցանկում մնացել են ծայրահեղ աղքատները: «Այս մասին ոչ միայն իմ ուսումնասիրություններն են փաստում, այլեւ ակնհայտ է, որ վերջին 20 տարում բնակարաններ են ստացել հիմնականում այն մարդիկ, որոնք շատ ճարպիկ, «շուստրի» են եղել, համաձայն եմ այդ կարծիքի հետ: Իմ տպավորությունն այն է, որ մնացել են այն մարդիկ, որոնք պնդաճակատ չեն», - ասաց բանախոսը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

, 15 , 2010, No 39 « »

4 2009 ,

, .

, .

, ,

,

:"

" . " . " .

:

, - ,

:

" "

" . ,

, , :

, .

:

" , "

" -2"; , . . 24 2009 ., 1054

300

N1:

" -2"





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԾՐԱՌԹՅԱՆ ԿԱԽԱՐԱԿՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱԽԱՐԱՐ

ՏՆՏԵ քաղաքի Գաղափարային հոսանքով
Կառավարության սահմ. N
Ձև N 00001 Փաստ 002209
ՀԱՅԱՍՏԱՆ
ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Տեր N
Սեր N

ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար
պարոն Մ. Սարգսյանին

Նարդիլի պարոն Մարգարյան

Ե կառավարում ՀՀ վարչապետի 2010 թվականի հուլիսի 21-ի N 02/24.11/8415-10
համահարաբանված ընտրվելով ՀՀ վարչապետին և ՀՀ շաղաբաշինության ետխարարին
առդված «Շրտակ կենտրոն» հասարակության կազմակերպության նախագիծ էլ բաց նախկին
արհարային կարգերը, նայանում եմ

բաց նախկին նրված Վրասթի քաղաքի Մուշ-2 բարանունի նորակառույց
ապահարանարան շինարարի նորակ կառույց կենտրոնային պարանունը ապահարան
նորակում «Գրեյդ ձիգ» վան բանակարան քննարարանն իր միջոցները կարգին
լրանանարան և գաղի և կենտրոններգաղի առդվյաներ, ինչպես նաև զազոջանները,
անհարարանիմիլյանն արարարանները, ջրաղանն նախկինայլի անարարան և
ցանցերը և միջոցան աշխատանքներ:

Չառանկով բնակարանների ներանունն անհարանության իրաններները զրանդան
զորանրաղի անդրանին՝ կարգին աններով ոչ նիմանուն շինարարանների (անանրերի)
արանուն և դրանց բանդան առանայլի և բանունը և նախան անհարանարանը, ՀՀ
շաղաբաշինության նախարարարանը 2010 թվականի հուլիսի 17-ին համարարանարան
զրարաններով դիմել և ՀՀ Շիլանի արարարին և Գաղափար քաղաքայինը՝ ինդրանյան
համահարանանն առանկարան արարարան բնարանի համահարանին հիման ևրան
անարանի բանունը արանն անանը՝ կառույց ծառարարաններ անարանը
լրանայլի արարանների անն անանարանը և պարանարանի կենդան գարանարան:

Անդարանն ընրանուն ևն զազանարանարան, կենտրոնարանարանն և
զրանարանարանն բանանը արան պարանարանի կրանն աշխատանքները:

Միանանանակ անդանարանն եմ, որ վրան նրված բաց նախկին արարարանի և նաև
«Նարան» ինտերենային բնարան, որի կառույցարանը ՀՀ շաղաբաշինության
նախարարարան պարանունը կառարանի և նայն ինտերենային բնարան 2010
թվականի հուլիսի 16 ին:

Նարանըով

Մ. Մարգարյան

Ն. Մարգարյան
52 46 20

**Գյումրու Մուշ-2 թաղամասում բնակարան ստացած, ինքնակամ կառույցներում
բնակվող բազմանդամ ընտանիքներին իրենց կողմից տնօրինվող ինքնակամ
կառույցներն օրինականացնելու հնարավորություն ընձեռելու մասին**

Դիմում-ուղերձ

Հարգելի պարոն վարչապետ և պարոն նախարար,
Մենք գիտենք, որ Գյումրին տնակներից ազատելու խնդիրը Ձեր կողմից կարևորվում է:

Դուք քաջատեղյակ եք, որ անցած տասնամյակներում անօթևան հարյուրավոր ընտանիքներ, կորցնելով բնակարան ստանալու հույսը, ստիպված ստեղծել են ինքնակամ բնակելի կառույցներ: Ներկայումս նրանցից մի շարք ընտանիքներ բնակարաններ են ստացել և դրանք սեփականաշնորհելու համար պարտադրված են ժամանակավոր կացարաններից ազատել տարածքներն ու հանձնել քաղաքապետարանին:

Մեր ուսումնասիրություններով՝ բնակարանների բաշխման ներկա փուլով 1056 բնակարան ստացած ընտանիքների թվի գրեթե կեսը՝ 460-ը, բաղկացած են 5 և ավելի անդամներից, որոնք մեծ ցանկության դեպքում անգամ ժամանակավոր կացարանները հանձնելիս չեն կարող նոր ստացած՝ 40-65 քառ. մետր մակերեսով բնակարաններում տանելի պայմաններ ստեղծել իրենց ընտանիքների համար: Ուստի կարծում ենք՝ տեղին կլինի, եթե որոշ բազմանդամ և ինքնակամ բնակելի կառույցներ տնօրինող ընտանիքների, հիմք ընդունելով ընթացիկ տարում ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, հնարավորություն տրվի օրինականացնել իրենց ինքնակամ կառույցները և թույլատրվի նոր ստացած բնակարանները սեփականաշնորհել առանց ժամանակավոր կացարանների հանձնման: Նման մոտեցման դեպքում այդ բազմանդամ ընտանիքների բնակարանային խնդիրը կարելի կլինի համարել իրոք լուծված:

ՀՀ քաղաքաշինության նախարարությանն առաջարկում ենք նաև ստեղծել բնակարաններ ստացած ընտանիքների կողմից ժամանակավոր կացարանների ազատման հարցերն ուսումնասիրող հանձնաժողով: Եվ միայն այդ հանձնաժողովի ուսումնասիրությունների ու որոշումների հիման վրա տրամադրվեն տնակներից տարածքների ազատման մասին տեղեկանքները:

Դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով, որ նման հանձնաժողով ստեղծելու դեպքում դրանում ՀՀ քաղաքաշինության նախարարության, մարզային ու ՏԻՄ իշխանությունների ներկայացուցիչներից բացի կընդգրկվեք նաև աղետի գոտում գործող ՁԼՄ և ՀԿ ներկայացուցիչներ:

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

06.08.2010 թ.

Դիմում-ուղերձ

Գյումրու Մուշ - 2 նորակառույց թաղամասի բնակեցումն արագացնելու նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու խնդրի մասին

Հարգելի պարոն վարչապետ և պարոն նախարար.

անշուշտ Դուք քաջատեղյակ եք, որ Գյումրու Մուշ-2 նորակառույց թաղամասի բնակեցման գործընթացում ի հայտ են եկել զգալի խոչընդոտներ: Շիրակին առանձնահատուկ մոտալուտ ցրտաշունչ ձմռանը նորակառույց թաղամասն առավել դժվար, եթե չասենք գրեթե անհնար կլինի բնակեցնելը, իսկ ձմռանը նորակառույց բնակարաններն առանց բնակեցման թողնելն իր հերթին կբերի ծանր հետևանքներ: Ուստի բնակարան ստացած ընտանիքների՝ տնակներից նոր բնակարաններ տեղափոխումն արագացնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է հրատապ լուծել հետևյալ խնդիրները.

1. Բնակարաններն ապահովել անխափան ջրամատակարարմամբ:

Ներկայումս նորակառույց շենքերում բնակություն հաստատած ընտանիքները հիմնականում օգտվում են թաղամասի ծայրամասում հոսող ջրի ծորակից: «Շիրակջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից բնակարաններում ջրամատակարարում չի ապահովում՝ այն պատճառաբանությամբ, թե ոչ բոլոր բնականներն են բաց, և փակ բնականներում հնարավոր չէ կանխել վթարները: Ինչպես նաև ջրաչափերի ու դրանց տեղադրման վճարներ են պահանջում բնակիչներից այն դեպքում, երբ «Գլենդել Հիլզ»-ը սանիտարատեխնիկական սարքավորումների տեղադրումն ու դրանց ցանցերի միացումներն իրականացնելու էր իր միջոցների հաշվին: Կարծում ենք՝ դրաների փակ լինելը լուրջ պատճառաբանություն չէ, վերջին հաշվով կարելի է ներքին գործերի մարմինների ներկայությամբ, համապատասխան արձանագրություն կազմելով բացել դեռևս չբնակեցված բնակարանների դռներն ու այդ բնակարանները ևս ապահովել ջրամատակարարմամբ: Առավել ևս, երբ բնակարանները դեռևս սեփականաշնորհված չեն քաղաքացիների կողմից և պատկանում են ՀՀ կառավարությանը:

2. Կառուցապատումն իրականացնող «Գլենդել Հիլզ»-ին պետք է պարտադրել, որ վերջիններս տրամադրեն շինարարական բավարար աշխատուժ և նորակառույց բնակելի շենքերում առկա թերություններն ու բացթողումները կարճ ժամանակամիջոցում վերացնեն: Այդ թվում՝ բնակարաններում իրականացնեն գազօջախների, սանիտարատեխնիկական սարքավորումների, ջեռուցման համակարգերի միացման աշխատանքները և մի շարք բնակարաններում տեղադրված ու կոտրված սանիտարատեխնիկական սարքավորումները փոխեն նորերով:

3. Գյումրու քաղաքապետարանն էլ պետք է նորակառույց թաղամասը քաղաքի կենտրոնին կապող նոր երթուղային միջոցներով ապահովի: Տրամաբանական կլինի, եթե բացի երթուղային տաքսիներից գործի նաև ավտոբուսային երթուղի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարաններ են ստացել հարյուրավոր միայնակ

ծեր, հաշմանդամ քաղաքացիներ, բազմանդամ, սոցիալապես ծանր պայմաններում ապրող ընտանիքներ, թերևս անհրաժեշտ է, որ առաջիկա մեկ-երկու ամիսը այդ ավտոբուսները նորակառույց թաղամասի բնակիչների համար գործեն անվճար:

«Շիրակ կենտրոն» ՀԿ
23.08.2010 թ.

11. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
2. ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948 թ. դեկտեմբերի 10)
3. Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա (Ստրասբուրգ, 1996թ. մայիսի 3)
4. ՀՀ կառավարության որոշումներ (10 հունիսի 1999 թ. N 432, փոփոխություններով և լրացումներով, 11 սեպտեմբերի 2008 թ. N 1024-Ն):



© «Շիրակ կենտրոն»
Գյումրի, 2010